



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



15843


355.2

8-64

1914

2010





348

# ԳԻՆՈՒՈՐԱԿԱՆ

## ՀԱՌԱՎՈՒԹԻԱՆ

### ՆՈՐ ՕՐԵՆՔԸ

ԱՆՁՐԱԺԵՏ ԱՄԷՆ ԳԻՆՈՒՈՐՑՈՒԽ ՀԱՄԱՐ

→→→-00-←←←-

Կազմեց՝

ՀՀ ՀՀ Պատմական Հովհաննեսան



Ա. ՊՈԼԻՍ

ՔԵՇԵՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1914

12 001

355.2
9-64

# ԹԵՅ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ



ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԲՆՏԻՐ, ՀՈՏԱԽԵՏ ԵՒ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ  
Կիմսրեցել և խմեցել սոյն փիդ մարքայով թէյեր

Քարասուն դրուշի թէյ առնողներուն  
հիճգ դրուշի թէյ ճուեր կը սրմ-

Կը ծախուի ճաեւ Անգղիական Ռէսի  
կտանը որ կը փայլեցնէ ամեն ժեսակ մետաղներ  
և սեմաւերներ:

Կեդրոնասեղի.—Պահձե Գարու, Սատ  
զիյէ խանի անկիւնը

55.2


- 64

# ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ

# ԵԱՐԱՅՈՒԹԵԱՆ

## ՆՈՐ ՕՐԵՆՔԸ

ԱՆՁՐԱԺԵՏԱ ԱՄԷՆ ԶԻՆՈՒՈՐՑՈՒԻ ՀԱՄԱՐ



Կազմեց՝

Արդիին Հովհաննեսկուն



ՔԵՇԵՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1914

ՆՈՐԱՉԵԼՈՒԹԵԱՆՑ  
ՄԵԾ ՎԱԶԱՌԱՏՈՒՆ  
ԹԻՐԻՆԿ

Դ.Ա.ԱԹԻԱ. — Կ. ՊՈԼԻՍ



ԻՐԱՊԷՍ ԱՃԱՆ ԾԱԽՈՉ  
ԱՌԱՋԱԿԱՐԳ ՅԱՍԱՏՈՒԹԻՒՆ  
Հիմնուած 1848ին


ԿԵԴՐՈՒԱԿԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՎԻԵՆԱ  
ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ ՎԻԵՆԱ ԵՒ ԲՈՒՍՆԻՑ  
ՄԱՍՆԱՀԵՂԴՐ ԱՐԵԽԵԼՔԻ ԳԼԽԱԽՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԼՋ  
ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱԳՈՒԹՆԵՐ ԱՐԱՆՑ, ԿՈՀՈՒՑ  
ԵՒ ՏԳԱԿՈՑ

ԿՈՇԻԿՆԵՐ, ԳԼԽԱՐԿՆԵՐ, ՃԵՐՄԱԿԵՎԵԿՆԵՐ

ՆԱՋՈՒԵԹԵԽԵՆԵՑ  
ԱՐԴՈՒԴԱՐԴԻ, ՄԲՈՐԻ, ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ  
ԵՒԼՆ. ԵՒԼՆ. ԱՌԱՐԿԱՆԵՐ


ԲԱՑԱՐՁԱԿԱՊԷՍ ՎԵՐԶԻՆ ԳԻՆ

ԹԻՐԻՆԿԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԸ ամենէն լաւ շինուած,  
ամենէն տոկուն և ամենմեն վայելուներն Ի  
և չափու վրայ կարուսածներեց չեն տարբերիր



# ԱՐԺԱՄԵԱՅ ՕՐԵՆՔ

## ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ



### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Յ0Դ. 1.— Օսմանեան հպատակ ամեն արու անհատ, այս օրէնքին համեմատ դինուորական ծառայութեան ևնթակայ է : Բացառութիւն է Ա. Օսման կայսերական գերգաստանը :

Յ0Դ. 2.— Զինուորական ծառայութիւնը ըստ մարդաբանմարի արձանագրութեան ծննդեան թուականին, իսկ մարդաբանմարի արձանագրութիւն չունեցողներուն համար ալ Մէջիսի իտարէի կողմէ ճշգուած ծննդեան թուականին խրաքանչիւր անհատի 18 տարեկանը լըշացուցած տարւոյն յաջորդող Մարտ ամսոյն սկիզբէն կ'սկսի :

Զինուորական ծառայութեան պատրաստ 19 և 5 տարեկանները, միմիայն պատերազմի մը պարագաներն ալ տակ տանուիլ :

52649-64. հ.

ՅՕԴ. 3. — 20 տարեկանը լրացուցած տարւոյն յաջորդող Մարտին սկիզբէն սկսեալ, զինուորական ծառայութեան պատրաստ անձերու ենթակայ եղած զինուորական գործողութիւնը զինուորական պարտաւորիչ ծառայութեան կը կոչուի :

Զինուորական պարտաւորիչ ծառայութիւնը, զինուորական դասակարգերու յատկացուած զինուորցուներու հետեւազօրաց և փոխադրութեան գործերու կոչւելիք անձանց համար 20 տարի, կանոնաւոր Մուվագաֆ (troupes régulières) և 5 տարի միւսքանիշը ըլլալու պայմանաւ 25 տարի է, ցամաքային ուրիշ դասակարգերէն երաժիշտ ու ոստիկան գօրաց համար ամբողջովին մուվագաֆ ըլլալու պայմանաւ 20 տարի, ծովային գօրաց համար ու 12 տարի Մուվագաֆ և 5 տարի ցամաքային զինուոր և Միւսքանիշը ըլլալու պայմանաւ 17 տարի է : Սակայն, 21 տարեկանը չըրացուցած զէնքի տակ առնուողներու, զէնքի տակ անցընելիք ժամանակին համեմատ, իրենց զինուորական պարտաւորիչ ծառայութեանց վերջաւորութենէն, Պատերազմական նախարարութեան յարմար դատած մաս մը կը զեղչուի :

ՅՕԴ. 4. — Այն ժամանակամիջոցը, յորում զինուորցուները գործնականապէս կը կարօտին իրենց զինուորական ծառայութեանը, կը կոչուի զէնքի տակ մընալու չրջան կամ զինուորական գործն ծառայութեան շրջան : Այս ժամանակաշրջանը կ'սկսի զինուորցուներու իրենց զօրամասերուն մեկնած օրէն :

ՅՕԴ. 5. — Զէնքի տակ միալու չրջանը՝ հետեւակազօրաց և փոխադրելազօրաց համար 2, ցամաքային ուրիշ դասակարգերու և երաժիշտ ու ոստիկան գօրաց համար 3 և ծովային գօրաց համար 5 տարի է :

Մուշազգագ ծառայութեան այս շրջաններէն աւելորդ մնացած մասը պահեստի (Ինքիյար) շրջանն է :

Յ0Դ. 6. — Բացարձակ պարագային մէջ, զէնքի տակ մնալու շրջանը, Պատերազմական նախարարին առաջարկով և Նախարարաց Խորհուրդին հաւանութեամբ զօրամասերու ամբողջութեան կամ մէկ մասին համար կայս . իրատէով կրնայ երկարաձգուիլ :

Յ0Դ. 7. — Ամէն տարի մինչև Մարտի սկիզբը 20 տարիքը լրացուցած զինուորացուները, Հոկտեմբերին զօրամասերուն մէջ դանուելու համար, նոյն տարւոյն մէջ բանակին պէտքին համեմատ ամբողջովին կամ մասամբ Պատերազմական նախարարութեան կողմէ զէնքի տակ կը հրաւիրուին :

Զինուորական գործօն ծառայութիւնը լրացնելով արձակուողները և անոնց տարեկից ըլլալով արածնեալ նկատուողներն ու 42րդ յօդուածին մէջ բացատրուած կերպով կարճատե ծառայութիւն կատարողները և կամ զրամական հատուցում վճարողները ինքիյարի դասակարգին մէջ կը փոխազգրուին :

Յ0Դ. 8. — Օրինաւոր պատճառներով իրենց ընկերներուն հետ զօրամասերը գալ չկարազացողները, եթէ մինչև մէկ ամիսէն գան, իրենց ընկերներէն ետք եկած կը նկատուին : Ամիս մը վերջ և կողները, անցուցած ժամանակներուն չափ իրենց ընկերներէն ետք կ'արձակուին :

Յ0Դ. 9. — Ինքիյար հեծելավաշաերու զինուորները, իրենց մասնաւոր կանոնազրին համեմատ կը կատարեն իրենց զինուորական ծառայութիւնը :

## ԶԻՆԻՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ

ՅՈՒԴ. 10. — Օսմանեան երկիրները՝ զօրաբանաւկի զինուորագրութեան շրջանակներու, զօրաբանակի զինուորագրութեան շրջանակները՝ զօրաբաժնի զինուորագրութեան շրջանակներու և զօրաբաժնի զինուորագրութեան շրջանակներն ալ զինուորագրութեան մասնաձիւղերու բաժնու ած են :

Զինուորագրութեան ինքիյարի և Միւսքանքրդի զործողութիւնները այս շրջանակներուն և մասնաճիւղերուն մէջ կը կատարուին :

## ԶԻՆՈՒՈՐՑՈՒՆԵՐՈՒ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ

ՅՈՒԴ. 11. — Ամէն տարի Մարտի սկիզբը, 18 տարեկանը լրացուցած անձինք նախնական քննութեան, 20 տարեկանը տմբողջացնողներն ալ վերջնական քննութեան կ'ենթարկուին :

## ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ

ՅՈՒԴ. 12. — Ամէն տարի Մարտի սկիզբը տամէն տեղի Մեկալիս ը ԽՏԱՐԵՆ, զինուորագրութեան մասնաձիւղի նախագահին ընկերակցութեամբ. 19 տարեկանը թեւակոխողներուն անունները մարդահամարի տաշտունեային միջոցաւ մարդահամարի տումորէն կ'ընդօրինագէ և օրինակին համեմատ ամէն գիւղի ու թաղի յատուկ, անունները պարունակող զատ զատ ցանկեր կազմելով նոյն ամսուան մէջ յիշեալ գիւղերու և թաղերու կըդրկէ : Այս ցանկերը՝ իրենց պատկանած թաղերուն ու գիւղե-

քուն մէջ ամէն կողմէ տեսանելի կերպով՝ մզկիթներուն, եկեղեցիներուն, սինակօկներուն տուներուն ու հանրային վայրերու վրայ կը կախուին :

30Դ. 13. —Մէջիս ը Խտարէն զինուորագրութեան քննութեան ցուցակներն նախնական քննութեան վերաբերեալ տուները, անձնական ստացուածոց արձանագրութիւնը հիմ բռնելով օրինակին համեմատ պիտի լեցնէ իւրաքանչիւր գիւղի և թաղի համար և նախորդ տարիներու տետրակներու մէջ իրենց քննութիւնն ու գործողութիւնը յաջորդ տարուան ձգուած զինուորացուներու անուններն ու գործողութիւններն ոլ տուանձինն տպուած քննութեան ցանկերուն վրայ յայտնութեամբ գրելով, այս ցանկին պիտի կցէ :

Մէջիս ը Խտարէն այս պարտականութիւնները կատարելու համար իր մէջն կրնայ յանձնաժողով մը կազմել :

30Դ. 14. —Ամէն տարի Մարտի սկիզբը, 18 տարեկանը լրացուցած անձերը, անուննին 13րդ. յօդուածին յիշուած ցանկին մէջ դանուի թէ ո՛չ, մինչեւ նոյն տարուան Հոկտեմբերին վերջը, գիւղին կամ թաղին մուխթարներուն ընկերակցութեամբ Մէջիս ը Խտարէն գիմելով 12րդ. յօդուածին յիշուած ցանկին մէջ իրենց արձանագրութիւնը կատարել պիտի տան, և եթէ իրենց ընտանիքին մէջ ըստ օրինի օգնութեան կարօտ անձեր կան, զայն բերանացի կամ զրաւոր որոշակի պիտի յայտնեն :

Օրինաւոր պատճառներով զաւ չկարողացող զինուորացուներուն արձանագրութեան գործողութիւնը իրենց ծնողքին կամ գիւղին և թաղին մուխթարներուն կողմէ պիտի կատարուի :

ՅօԴ. 15. — Մեկիս ը Իտարէն քննութեան տետրակին մէջ արձանագրուած ամէն զինորցուի և օրինաւոր պատճառներով բացակայողներուն ծնողքին կամ մուխթարին արձանագրութենէն վերջ մասնաւոր տետրակը ստորագրել և կամ կնքել տալով՝ առանց փոխարինութեան զինուորական ծառայութեան յատուկ արդան մը տալու և զինուորական ալ այս արդանակը պահելու և վերջնական քննութեան միջոցին պատկանեալ մարմնոյն ցոյց տալու պարտաւոր են:

ՅօԴ. 16. — Զինուորական ծառայութեան արդանը կառավարութեան կողմէ կրնայ պահանջուիլ այն ամէն տեղերուն մէջ, ուր կը պահանջուի օսմ. թէղքէրէ (Համիլիսիյէ) :

ՅօԴ. 17. — 14րդ. յօդուածին մէջ յիշուած ցանւկերուն նախնական քննութեան մատէն մէյմէկ օրինակ գրուելով արձանագրութեան յաջորդող տարւոյն Մարտաթօնուան միջոցին դիւղերու և թաղերու մուխթարներուն պիտի դրկուի այս օրինակը որ անմիջապէս ամէնուն կարենալ տեսնելիք վայրերը պիտի կախուին իւրաքանչիւր անձ այս օրինակներուն մէջ տեսած սխալներն ու թերութիւններն իրեն վերաբերի կամ ոչ, մինչև նոյն տարրուան Օգոստոսին վերջը իր պատկանած Մեկիս ը Իտարէին անձամբ կամ անուղղակի տեղեկացնելու աղատ է :

Այս մասին ըլլալիք գիմումին վրայ, ժողովին կողմէ, պէտք եղած քննութիւնն ու արձանագրութիւնը կատարուելով տակը պիտի ստորագրուի :

ՅօԴ. 18. — Մեկիս ը Իտարէն նախորդ յօդուածին մէջ յիշուած սրբագրութիւնը կատարելէն վերջ ցանկերուն մէյմէկ վաւերացուած օրինակը մինչև Հոկտեմբեր

րի վերջը Զինուորագրութեան մասնաճիւղի նախագահին և մարդահամարի պաշտօնեային դրկելու պարտաւոր է :

Յ0Դ. 19.— Մինչև 18րդ. յօդուածին մէջ յիշուած սրբագրութեան պայմանաժամկետին վերջը չարձանազրւող ները երբ գիտում ընեն՝ 102րդ. յօդուածին համաձայն պէտք եղած պատիժը ուսհմանուելով հանդերձ, Մէալիս ը Իտարէի ցանկերուն մէջ արձանագրութեւնները պիտի կատարուին և աղօտանները պիտի տրուին, և եթէ 18րդ. յօդուածին համաձայն պատճէնները դրկըւած են՝ անոնց վրայ աւելցուելու համար զինուորագրութեան ճիւղերուն և մարդահամարի պաշտօնեաններուն պիտի տեղեկացուի :

Յ0Դ. 20.— Զինուորագրութեան ճիւղին նախագահը կը քննէ Մէալիս ը Իտարէններէն եղած ցուցակներուն պատճէնները, թէ անոնք որէնքի պայմանները լրացուցած են թէ ոչ, աւբաւած կամ սրբուած են, և հարկ եղած գործողութիւններն ու 13րդ. յօդ.ին համեմատ նախորդ տարիէն փոխազրուածները զրուած են : Եւ եթէ թերութիւններ նշմարէ, Մէալիս ը Իտարէին հետ թղթակցելով կը որբագրէ : Այս պարտականութիւնները մինչև Փեարուարի վերջը լրացնելու ստիպուած են : Այնուահետեւ արձանագրուածներուն մասին համելիք տեղեկութիւններն ալ հետզհետէ այն պատճէններուն մէջ կ'աւելցնէ :

## ՎԵՐՉՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԻՃԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ

Յ0Դ. 21.— Ամէն տարի Մայիս 1ին զինուորագրութեան ժողովները, 18րդ. և 20րդ. յօդուածներուն մէջ յիշուած ցանկերուն համաձայն, մինչև Մարտի ըս-

Ակրզը 21 տարին թեւակոխողներուն և նախորդ տարին փոխազրուածներն վերջնական քննութեան կը ձեռնարկեն :

Յ0Դ. 22.—Որպէսզի վերջնական քննութիւնները ամէն կողմ սկսուի, պատերազմական նախարարութիւնը զինուորագրութեան կայս. Փէրմանները Մարտի սկիզբները զօրաբանակներու կը դրկէ, և զօրաբանակներն ալ զանոնք պէտք եղած տեղերը կը դրկեն և զինուորագրութեան ժողովներուն մասնակցելիք զինուորական բժիշկները կ'անուանեն և եթէ անբաւական գոն, քաղաքային պաշտօնէութեան հետ բանակցելով քաղաքային բժիշկներու անուանումը կ'աստանովեն :

Վերջնական քննութեան և զինուորակութեան գործողութիւնները ամէն կողմ մինչեւ Յունիսի վերջը աւարտած ըլլալու են :

Յ0Դ. 23.—Զինուորագրութեան ժողովները հետեւեալ անձերէն կը կազմուին :

Տեղւոյն ամէնէն մեծ քաղաքային պաշտօնեան :

Զինուորագրութեան ճիւղի նախագահը :

Ելմտական պաշտօնեան :

Միւֆթին և ուրիշ կրօնքներու հոգեւոր պետերը :

Քաղաքասկետութեան և Մհանիսը Իտարէին ընտրեալ անգամներէն երկուքական հոգի :

Ասոնցմէ ամէնէն մեծ քաղաքային պաշտօնեան ժողովին կը նախագահէ և զինուորագրութեան ճիւղին նախագահն ալ գործողութեանց կը հսկէ :

Մարդահամարի պաշտօնեան և զինուորագրութեան ճիւղին անգամ սպաները տասնց քուէի իրաւունքի, բացատրութիւններ տալու համար, և երկու բժիշկ (մէկը կարող է քաղաքային ըլլալ) զինուորցուները քննելու

և միայն այդ մասին քուէի իրաւունք ունենալու պայմանաւ ժողովին ներկայ կը գտնուին : Ասոնցմէ զատ, զինուորացուներէն սատիկանզինուորներ ընտրելու համար սատիկան զօրաց սպայ մը ու իր շրջանակէն ծովային զինուոր առնուելիք զինուորագրութեան ժողովներուն մէջ ալ ծովալին սպայ մը կը գտնուի : Ասոնք՝ միայն իրենց դասակարգերուն վերաբերող զինուորացուներու ընտրութեան մէջ քուէի իրաւունք ունին :

Կ. Պօլսոյ և արուարձաններուն մէջ երկու ձիւզերէն իւրաքանչիւրին համար մէյմէկ զինուորագրութեան ժողով պիտի գտնուի և առնք կուսակալին և Կ. Պօլսոյ պատկանած զօրաբանակին հրամանաւարին միշե բանակցութիւն կատարելով այս անձերէն և կամ անոնց տեղը բոնելիքներէն պիտի կազմուին :

30Դ. 24. — Զինուորագրութեան ժողովներու որոշումները ձայներու մեծամասնութեամբ կը արուին : Ձայներու հաւասարութեան պարագային, նախագահին գտնուած կողմը նախամնածար կը համարուի փոքրամասնութիւն կազմովները իրենց կարծիքները պատճառաբանութեամբ քննութեան տամարին մէջ արձանագրելու և կամ անոր կցուելու պայմանաւ դրաւորապէս կը լայնեն :

30Դ. 25. — Կայս. Ֆերմաններուն հաւանելէն վերջ Զինուորագրութեան ձիւզին նախագահը տեղույն ամենէն մեծ քաղաքային պաշտօնեային հետ բանակցելով զինուորագրութեան ժողովին որոշեալ օրուան մէջ կազմը վլը և նոյն տարրուան զինուորական ծառայութեան տարիին մէջ դանուողներուն նախորդ տարիին վիխագրուողներու որոշեալ ժամանակին մէջ ներկայանալը կապահովվէ : Այս մասին կառավարութիւնը իւրաքան-

չիւր գիւղի ու թաղի համար հրաւիրագրեր գրելով  
մուխթարներուն կը դրկէ :

Յ0Դ. 26. — Հրաւիրուղ զինուորցուներն ու ամէն-  
անոնք որոնք ասանց զինուորութեան հետ առնչութիւն ու-  
նին , և հիւանդկախ ըլլալով օդնուորութեան կարօտ ըլլալ-  
նին կը պնդեն , պարտաւոր են ժողովին արձամբ ներ-  
կայ զանուիլ : Իսկ անոնք , որոնց անձամբ ներկայ  
չկարենալ գանուելու աստիճան հիւանդ կամ տկար  
ըլլալնին դիւրին կամ թաղին կողմէ վկայագրով  
մը հաստատուած է , և 46րդ . յօդուածին 3րդ . ու 4րդ .  
հատուածներուն մէջ յիշուածները անձամբ ներկայանաւ-  
լու պարտաւորութենէն զերծ են : Տկարութեան կամ  
հիւանդկախութեան պատճառաւ անձամբ ջներկայացող-  
ները , զինուորագրութեան գործողութիւնները որանալէն  
վերջ դրկուելիք ժողովին բժիշկներուն կողմէ կը քըն-  
նուին , և իրենց հիւանդութեան մասին արուած տեղե-  
կազրին վրայ , զինուորագրութեան հիւոյին նախագահը  
այսպիսիներուն վիճակը կը քննէ և 31րդ . յօդուածին  
համաձայն առողջացածներուն վիճակարկութիւնը կա-  
տարել կուտայ :

Յ0Դ. 27. — Որուեալ օրը , կայս . ֆէրմանը հը-  
րապարակաւ կը կարգացուի , պարունակութիւնը կը  
բացատրուի և Սուլթանին համար աղօթքներ ըլլալէ  
վերջ վերջնական գործողութեանց կը ձեռնարկուի :

Յ0Դ. 28. — Ժողովը կը քննէ թէ . քննութեան  
տուարները օրինաւորագէս լեցուա՞ծ են թէ ոչ . քննու-  
թիւննին նախորդ տարիէն ներկայ տարւոյն յետաձըգ-  
ուած անձերը մասնաւոր ցուցակներուն մէջ մտա՞ծ են  
թէ ոչ : Նոյնպէս կը քննէ 32րդ . յօդուածին համաձայն  
կազմուելիք բացակայողներու տոմարին մէջ արձանաւ-

գրուղներուն մասին կատարուելիք հետապնդումներուն աստիճանը :

Հրապարակաւ կը կարդացուին ցուցակներն այն գիւղին կամ թաղին, որուն զինուորցուներուն քննութիւնը պիտի կատարուի : Անուններնին կարդացուածներուն ներկայ ըլլալը կամ չըլլալը կ'օրոշուի և մէկիկ մէկիկ աչքէ կ'անցուին և խրառքանչիւրին աղջաները պահանջուելով կը փոխանակուի : Իւրաքանչիւր զինուորցուի ընաանեկան և գրամական վիճակը կրկին կը հարցուի : Եթէ ցուցակին գործողութեանց հետ հակասութիւն մը տեսնուի, քննութիւն կատարուելով կը սրբազրուի :

Յ0Դ. 29. — Նախորդ յօդուածին մէջ յիշուած գործողութիւններն կատարուելէն վերջը, զինուորցուները՝ ժողովին ներկայութեան բժիշկներուն կողմէ կը քննուին, թէ մարմնական ընդունակութեան կանոնագրին համաձայն զինուորական ծառայութիւն կատարելու կարող են, և թէ մասնաւոր ընդունակութեանց համաձայն զինուորական զանազան ծառայութիւններէն ո՞ր մէկին աւելի ձեռնառու են :

Վերջնական քննութեան հետեւանոք ժողովին տալիք որոշումները կ'արձանագրաւին քննութեան ցուցակին ետեւի օրինակներուն մէջ և զինուորցուին արձանագրութեան տոմարին (իննիկ) և աղջաներուն մասնաւոր տուններուն մէջ : Բժիշկներն ալ հիւանդութեան տեսակը, հիւանդին ընդունակութեան աստիճանը և ասոնց՝ մարմնական ընդունակութեան կանոնագրին ո՞ր յօդուածին համապատասխան ըլլալը անձամբ ցուցակներուն մէջ կը գրեն ու կ'սարորազրեն :

Յ0Դ. 30. — Զինուորցուներուն զինուորութեան հետ

առնչութիւն ունեցողներէն անոնց՝ որոնք կը յայտարարեն թէ հիւանդակախ են, բժշկական քննութիւնները ժողովին մէջ գտնուած բժիշկներուն կողմէ կը կատարուի եւ 29րդ։ յօդուածին համաձայն ցուցակները գրուելով կ'ստորագրուին և քննութեան արդիւնքին համեմատ ժողովին կողմէ որոշում կը տրուի։

30Դ. 31. — Առեւտուրի և ուսանողութեան կամուրիչ պատճառով մը իրենց դաւառակէն (Գազա) դուրս դանուողները, իրենց զինուորական ծառայութեան նրգուաններով և իրենց իրրե հիւր զանուած վայրին քաղաքապեառութենէն ինքնութեան վկայագիրներով իրենց դանուած գաւառակին զինուորագրութեան ժողովին կը ներկայանան և իրենց բժշկական քննութիւնը հոն կատարել կուտան։

Այսպիսիններուն քննութեան արդիւնքը եղող տեղեկութիւններով իրենց ընտանիքին մասին ըրած յայտարարութիւնները արձանագրութեանց մէջ կը նըշանակուին և հարկ եղած գործողութիւնը կատարուելու համար վիճակարկութենէն առաջնոյն ժողովին նախագահին կողմէ զինուորացուին պատկանած գաւառակին զինուորագրութեան ժողովին կը տեղեկացուի։ Երբ յիշեալ տեղեկութիւնները վիճակարկութենէն վերջ հասնին, զինուորագրութեան ճիւղի նախագահին մասնակցութեամբ Մհամլիսի իտարէին ներկայութեան, յիշեալին զէնքով կամ առանց զէնքի ծառայելու համայատկացուելիք մասին համար, իրենց պատկանած գաւառակին մէջ, նոյն տարին վիճակարկութիւնը կատարուած զինուորացուներուն և իրենց թիւին համեմատ զատ զատ թիւեր պարունակող քուններ կը պատրաստեն և անոնց ալ վիճակարկութիւնը 38րդ։ յօդուածին համա-

Հայն կը կատարուի : Եթէ քաշուած թիւերը առաջուը-  
նէ ելած են ցուցակին մէջ անսնց անուններուն քով  
նոյն թիւը կրկնինի նշանով կը զրուի :

Յ07. 32.— 26րդ . և 31րդ . յօդուածներու համա-  
ձայն անձամբ չներկայացող և պատճառաբանութիւնները  
չտեղեկացնալ զինուորցուները երբ ձեռք անցուին ,  
սոյն օրէնքին 106րդ . և 109րդ . յօդուածներուն տրա-  
մագրութիւննը դործագրուելու պայմանաւ , զինուորա-  
գրութեան տոմարին մէջ բացատրութիւն կը արուի և  
ըստ օրինակին բռնուելիք բացակայութեան տոմարին  
մէջ բացատրութիւններով մեկտեղ կ'արձանագրուին և  
այս տոմարին մէկ պատճէնը տեղական կասավարու-  
թեան կը արուի սրպէսզի հարկ եղած հետապնդում-  
ներ կատարուին ձերբակալութեան համար : Զինուո-  
րագրութեան ժողովը և քննիչ մարմինը ամէն տարի  
սոյն բացակայութեան տոմարը 28րդ . յօդուածին և  
57րդ . յօդուածին 6րդ . հատուածին համաձայն կը քըն-  
նեն և հարկ եղածն ի գործ կը զնեն :

Յ07. 33.— Վերջնական քննութեան միջոցին  
մարդահամարի և քննութեան ցուցակներուն մէջ երբ  
ջակասութիւն տեսնուի , զինուորագրութեան ժողովին  
կողմէ կը քննուի և եղերքը պատճառաբանութիւննե-  
ը կը զրուի և կը վաւերացուի :

Յ07. 34.— Իրենց գործողութիւններն ու քննու-  
թիւնները կատարուած զինուորցուները հետեւեալ 4  
մասերու կը բաժնուին :

1.— Զէնքով զինուորական ծառայութեան ըն-  
դունակ եղողներ ,

2.— Առանց զէնքի զինուորական ծառայութահն  
ընդունակ եղողներ ,

3.— Յաջորդ տարիներու ձգուածներ :

4.— Մարմնապէս զինուորական ծառայութեան  
անընդունակ եղողներ :

Իրենց զինուորական ծառայութիւնը զէնքով կա-  
տարողներուն անուններուն քով հաստ գրիչով (չ) (օ)  
և առանց զէնքի զինուորական ծառայութիւն կատա-  
րողներուն անուններուն քով (չ) նշանը կը գրուի :

Յ0Դ. 35.— Անուններուն քով (չ) (օ) նշանը  
գրուած զինուորցուներուն թիւին համնմատ ժողովին  
ներկայութեան մասնաւոր կերպով քառանկիւն թուղ-  
թեր կարուելով մէկ թիւէն սկսեալ իւրաքանչիւրին  
կարգաւ թիւեր կը գրուին : Յետոյ այս թուղթերը ժո-  
ղովին և ամէն մարդու աչքերուն առչե ծալլուելով  
մասնաւոր քուէթուղթերու մէջ կը գրուի և քուէթուղ-  
թերն ալ տոպրակի մը մէջ գրուելով , տոպրակը ժողո-  
վին նախագահին կը յանձնուի :

Յ0Դ. 36.— Յարմար և կարճ աղօթքէ մը վերջ  
զինուորազրութեան նիւղին նախագահը , քովը գտնը-  
ւած տոպրակը բերնէն բոնելով , այնպէս մը կ'երերցնէ  
որ մէջը գտնուած քուէթուղթերը լաւ կերպով իրար  
խառնուին , և յետոյ զինուորազրութեան ժողովին տը-  
նօրէնին կողմէ , քննութեան ցուցակին մէջ գտնուած  
գիւղերուն կարգով անունները կարգացուող լւրաքան-  
չիւր զինուորցուի այս տոպրակէն քուէթուղթը մը քա-  
շել կը տրուի :

Յ0Դ. 37.— Անունը կարգացուող լւրաքանչիւր  
զինուորցու յառաջ գալով մաաները բաց և թեւը սօթ-  
տած աջ ձեռքը քուէթուղթի տոպրակը մտցնելով դուրս  
հանած մէկ քուէթուղթը ժողովին անդամներէն միոյն  
կուտայ , ան ալ քուէթուղթէն թուղթը կը հանէ ու

գրւած թիւը հրապարակաւ կը կարդայ և այն թիւը զինուորցուին անունին քով մասնաւոր տեղը կ'արձանագրուի ու կը նշանակուի :

ԶԵՆՔՈՎ ծառայելիքներուն վիճակարկութիւնը վերայիշեալ կերպով կատարուելէն վերջ, առանց զէնքի ծառայելիքներուն համար ալ ՅՅրդ. յօդուածին համեմատ և ուրիշ գոյն մելանով նորէն և մէկէն սկսեալ իրենց թուայն համեմատ թիւեր գրուելով, վերոպրեալ կերպով ասոնց ալ վիճակարկութիւնը կը կատարուի և անուններուն քով կ'արձանագրուի ու կը նշանակուի :

Մասնաւոր բաժնին մէջ յիշուած օրինական տրամադրութեանց հետեւանոք առանց վիճակարկութեան զինուոր առնուող անձինք թիւ քաշելու իրաւունքը չունին :

Վիճակարկութեան գործողութիւնը կը լրանայ երբ երկու դասակարդի զինուորցուներու թիւերը պարունակող քուէթուղթերը հատնին :

ՅՕԴ. 38.— Վերջնական քննութիւննին կատարուած բայց վիճակարկութեան պահուն ժողովին անձամբ ներկայանալու չկարգացողներուն թիւերը իրենց ծնողքը, կամ ազգականներէն մէն և կամ գիւղին և թաղին մուխթարը կը քաշէ :

ՅՕԴ. 39.— Վերջնական քննութեան վիճակարկութեան գործողութեան այս կերպով լրանալէն վերջ, քննութեան ցուցակին երեք օրինակներուն տակը, նոյն գաւառակին մէջ քննութեան և վիճակարկութեան գործողութեանց այն օրէնքին համաձայն կատարուելը վաւերացնելու համար ընդ օրինակին բացատրութիւն մը կը գրուի, և զինուորագրութեան ժողովը բաղկացնող նախազահին, ատենապետին և անդամաց կողմէ սառ



բագրուելով՝ մին զինուորագրութեան ժողովի նախագահին, միւսը ատենապեաին և երրորդն ալ մարդահամարի պաշտօնեային կը յանձնուին :

Յ0Դ. 40.— Զինուորագրութեան ճիւղին նախագահը, ընդ նախորդ յօղուածին տրամադրութեանց իրեն յանձնուելիք ցուցակներէն, ընդ օրինակին վիճակագրութիւն մը պատրաստելով մինչև Յուլիսի մէջտեղերը իր զօրաբաժնին դրկելու ստիպուած է : Զօրաբաժնի հրամանատարները այս վիճակագրութիւնները միացնելով մինչև Յուլիսի վերջերը Զօրաբանակներու, և զօրաբանակներուն հրամանատարներն ալ Սեպտեմբերէն առաջ Պատերազմական Նախարարութեան կը դրկեն :

Զինուորցուներուն յատկացումին և կազմակերպութեանց մէջ այս ցուցակները հիմ պիտի առնուին :

## ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ ԶԷՆՔՈՎ ԿԱՄ ԱՌԱՆՑ ԶԷՆՔԻ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ

Յ0Դ. 41.— Զինուորական ծառայութիւնը զէնքով կամ առանց զէնքի կատարողներու զինուորական գործօն ծառայութիւնը ամբողջական կամ կրծատեալ չըրջանով, կամ զրամական հատուցում ընելով կը կատարեն, և կամ այս չրջանը արտօնութեամբ կ'անցընեն ։ Ասոնք որ կրծատեալ չրջանին մէջ պիտի ծառայեն, Եէմէնէ, Ասիրի, Հիճազի, ծովային և ոստիկանութեան կազմակերպութեանց չեն կրնար արուիլ, և անոնք որ զրամական հատուցում կը վճարեն, մասնաւոր բաժնի տրամադրութեանց համեմատ գործողութեանց կ'ենթարկուին :

## ԿՐՑԱՏԵԱԼ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

Յ07. 42.— Կրճատեալ ծառայութեան շրջանը  
մէկ տարի է : Վերջնական քննութեան միջոցին հետեւ-  
եալ պայմանները լրացուցած ըլլալնին հաստատուած  
դինուորցւները այս խոյլտութենէն կ'ոգտուին :

1.— Այն ամէն ուսուցիչները որոնք կրթական  
նախարարութեան կողմէ վաւերացուած ունէ վարժա-  
րանի մը մէջ մշտական կերպով կը պաշտօնավարեն ,  
(Ասոնց վարժապետանոցի վկայական և կամ կրթական  
նախարարութեան և կրթական վարչութեանց կողմէ վա-  
ւերացեալ ինքնութեան վկայական ունենալը պայման է : )

2.— Պետական համալսարանէն , գաւառակային  
մետրիկաներէն քարոզչական մետրիկաներէն Քատարօփ  
վարժարանէն , պաշտօնական վարժապետանոցներէն ու  
ծրագիրներն ու ուսուցիչներն վկայականները կրթական  
նախարարութեան կողմէ վաւերացուած և քննութիւն-  
ները կրթական վարչութենէն կողմէ զրկուած քննիչ  
մարմնոյն կողմէ կատարուող անդաման բարձրագոյն  
վարժարանաց ուսանողներն ու ընթերցաւարտները , և  
նոյնպէս պետական Սուլթանիէ վարժարաններու , եօթ-  
նամսեայ իտատիները , նոյն աստիճանի պաշտօնական  
ուրիշ վարժարաններու , և ծրագիրներն ու ուսուցիչ-  
ներն վկայականները կրթական նախարարութեան կողմէ  
վաւերացուած և քննութիւնները կրթական վարչութե-  
նէն զրկուած քննիչ մարմնոյն կողմէ կատարուող Սուլ-  
թանիէ վարժարաններն և եօթնամսեայ իտատիներու աս-  
ալ ձանը ունեցող անպաշտօն վարժարաններու ընթա-  
ցաւարդներն ու վերջին երկու տարիներու ուսանողները .

3.— Այն ամէն անձինք որ կրթական նախարա-

բութեան քննութեան և վաւերացման ենթակայ ու ուսմանց աստիճանը Սուլթանիէ կամ հօթնամեռյ իտահի վարժարաններուն ուսմանց համապատասխան օտար վարժարաններէ վկայականով ելած և իրենց վկայականները կրթական նախարարութեան, կամ նահանգներու և անկախ սանագիտներու կրթական տնօրէններուն վաւերացնել տուած են, և ուսմանց աշտիճանին բարձրագոյն վարժարաններու ուսմանց համապատասխան օտար վարժարանաց ուսանողներն ու ընթացաւարտները :

4.— Բարձրագոյն վարժարաններու աստիճանը ըլլալը կրթական նախարարութեան կողմէ վաւերացեալ օտար երկիրներու համալսարաններուն ու ուրիշ բարձրագոյն վարժարաններուն ուսանողներն ու ընթացաւարտները, և Սուլթանիէ վարժարաններու և կամ հօթնամեռյ իտահէններու աստիճան ունենալը նոյնպէս վաւերացեալ օտար երկրի երկրորդական վարժարաններէն վկայականով ելածները :

5.— Զինուորական և ծովային վարժարանաց ուսանողներէն արտաքսուածները,

6.— Խոլամական կրօնական վարժարաններու այն ուսանողները որոնք չորրորդ տարուան քննութեան միջոցին արժանիք ցույց կուտան, և քրիստոնեայ ու հրեայ կրօնական վարժարաններէն ընթացաւարտներ :

Վերոյիշեալ կերպով կրծատեալ ծառայութեան ենթակայ անձինք իրենց ուսման տեսակին և մարմնական ընդունակութեանց համեմատ ցամաքային և ծովային գանազան զինուորական դասակարգերու կը բաժնուին : Ասոնցմէ ծառայութիւն կատարողները . 7րդ . և 77րդ . յօդուածներուն տրամադրութեանց համեմատ, իրենց տարեկիցներուն հետ ինքինարի կը փոխադրուին և

առանց զօրաշաբժի և ուազմափորցի կրկեն զէնքի տակ  
զինուելու պայմանաւ կ'արձակուին։ Եթէ ասոնց մէջ  
սպայութեան յատուկ պայմաններու ու յատկոթիւննեւ  
ըսն ունեցողներ կան, պահեստի սպայեաց կանօնագրին  
հնմարկուելով վերջր նոյն ասպարէզը կ'ընդունուին։

Յ0Դ. 43. — Բժշկական ժամիշրիին զինուորական  
և քաղաքային ճիւղերուն ուսանողները, կրնայ քսան  
տարեկանէն յաջորդող տարւոյն մէջ, իրենց տարեկից  
զինուորցուներուն հետ մեկանդ զէնքի տակ պիտի կան-  
չուին և զինուորական շրջանակներու մէջ Յ ամիս ծա-  
ռայել տալով իրենց վարժարանը պիտի վերադարձուին  
քաղաքային ուսանողները իրենց բնիթացքն աւարտելէ  
վերջ վեց ամիս ալ զինուորական շրջանակներու հիւան-  
դանոցներուն մէջ պիտի ծառայեն։ Յեղազործներն և  
ատամինաբոյմերուն մասին ալ այս կերպ գործող ութիւն  
պիտի ըլլայ։

## ԱՐՏՈՆԵԱԼ ԶԻՆՈՒՈՐՑՈՒՆԵՐ

Յ0Դ. 44. — Թիւերը քաշուած երկու կարգի զի-  
նուորցուներէն կառավարութեան պահանջուած չափով,  
թեւի կարգով կ'առնուին, իսկ աւելցածներն ալ ի պա-  
հանջել հարկին զէնքի տակ տանուելու պայմանաւ առ-  
ժամապէս կ'արձակուին։ Այս արձակուողները հետևա-  
կաց կարգէն են։

Յ0Դ. 45. — Արձակուած զինուորցուները իրենց  
արձակուրդի միջոցին, ի պահանջել հարկին դէնքի տակ  
կ'առնուին, կը մարդուին և զէնքի տակ զանուած տաեւ-  
նին համար գանձուելի մասնավճարները չեն զանձուիր։

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՅԱԶՈՐԴ ՏԱՐՈՒԱՆ ՅԵՏԱԶԳՈՒԱԾ ԶԻՆՈՒՈՐՑՈՒՆԵՐ

Յ07. 46. — Հետեւեալներն են այն զինուորցուները, որոնց գործողութիւններն ու քննութիւնները յաջորդ տարուան յետաձգուած է:

1. — Անոնք, որոնց մարմիններուն բոտ բաւականի զարդացած չըլլալը 29րդ. յօդուածին համեմատ բժշկականորէն կը հաստատուի:

2. — Անոնք որոնց համար նոյնպէս հաստատուած է թէ ժամանակի անցնելով անհետանալիք հիւանդութիւններու և ախտերու ենթակայ են.

3. — Անոնք, որոնք բանտարկութեան, առժամեայ աքսորի, առժամեայ բերդարգելութեան և մինչե հինգ տարի թիապարտութեան դատապարտուած են, բայց պատիմի պայմանաժամը չեն աւարտած:

4. — Զինուորական զիշերօթիկ վարժարաններու ուսանողները :

Նախորդ յօդուածներու տրամադրութեանց համեմատ գործողութիւններն ու քննութիւնները յաջորդ տարուան թողուածներէն, առաջին եւ երկրորդ հատուածներուն մէջ յիշուած անձինք Գտարի, Յրդ. հատուածին մէջ յիշուածները մինչե. | ըենց արձակումը, և չորրորդ հատուածին մէջ յիշուածները իրենց ուսման տեւողութիւնը քննութեան և զործողութեան ենթակայ են:

Առաջին և երկրորդ հատուածներն մէջ յիշուածներէն անոնք, որոնց հիւանդութիւնը վերջին քննութեան ատեն կը պարունակէ, վերջին քննութենէն ըս-

կսեալ , և երրորդ հատուածին մէջ յիշուածներէն անոնք , որոնք 35 տարեկանը լրացուցած են բայց աքսորի կամ բերդարգելութեան պատիմները չեն լրացուցած , իրենց արձակումին յաջորդող տարիէն սկսեալ զինուորական սպատմի տրամադրութեանց ենթակայ կ'ըլլան :

Յ0Դ . 47. — Կարճատեւ ծառայութեան ենթարկուած զինուորացուներէն անոնք , որոնք պաշտօնեայ ըլլալով զէնքի տակ առնուած են , արտօնեալ կը նրկատուին , և իրենց թոշակէն իրենց փոխանորդներուն տրւելիք մասէն աւելին իրենց բնտանեաց , կամ եթէ ընտանիք չունին , իրենց կը արուի :

## ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ ԳՈՐԾՆԱԿԱՆԱՊԷՍ ԿԱՏԱՐԵԼԵ ԶԵՐԾ ԵՂՈՂ ԱՆՁԻՆՔ

Յ0Դ . 48. — Հետեւեալ զինուորացուները զինուորական ասպարէզէն դուրս կը թողւին .

1. — Անոնք , որոնք զինուորական ծառայութիւնը գործնականապէս կատարելէ արդիլող հիւանդութիւններէն որևէ մէկով վարակուած ըլլալը զինուորակարութեան ժողովին կողմէ քննութեամբ հաստատուած և ֆիզիքական ընդունակութեանց օրէնքին տրամադրութեանց համաձայն զինուորական ասպարէզէն դուրս թողուելը հարկ եղած և 51րդ . յօդուածին մէջ յիշուածքնիչ յանձնաժողովներուն կողմէ վաւերացուած է :

2. — Անոնք , որոնք մշտնջենական աքսորի , մըշանջենական բերդարգելութեան և հինգ տարիէ աւելի թիապարտութեան դտապարտուած են :

## ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿԱՐՈԾ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ԸՆՏԱՆԵԱՑ ՄԱՍԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒԽՆՆԵՐ

Յ07. 49.— Մուինսիզութեան պատճառաւ զինուորական ծառայութենէ զերծ մնալու դրութիւնը չընջուած է :

Զէնքի տակ առնուելիք զինուորցուներուն այն ծնողքներն ու աղգականները որոնք անոնց չնորհիւ կը մնանին ու կ'ապրին և օգնութեան կը կարօտին, զինուորցուին, ի պատասխան հրաւերին զինուորագրութեան ձիւղի կերպոնը անձամբ ներկայացած թուականէն սկսեալ մինչև արձակումի հրամանը տրուած ամսոյն վերջը կառավարութիւնը անձ գլուխ առ նուազն Յ0 դրչ. ամսաթոշակ կը վճարէ :

Նոյն կերպ զործողութիւն կը կատարուի 41 օրէն աւելի պայմանաժամանակ զէնքի տակ առնուած արտօնեալ զինուորցուներուն, ինթիյարներու և միւսքաֆրզներուն մասին : Յիշեալ թոշակներուն յատկացման ու ստացման վերաբերեալ գործողութիւններն ու պաշտօնաթուղթերը ամէն տեսակ ծախքերէ և դրոշմի տուրքերէ զերծ պիտի ըլլան, և մուխթարներու կողմէ այս առթիւ տրուելիք իշխուխապերներու համար վարձք չպիտի պահանջուի :

Յ07. 50.— Զինուորցուներու այն աղգականները, որոնց օգնութեան կարօտ ըլլալնին կամ չլալնին պիտի քննուի, ինչպէս նաև այն աղգականները որոնք ասոնց մուին կը նկատուին հետեւեալ ցուցակին մէջ ցույց տրուած են :

Այս ազգականները որոնք մուխն պիտի կարենան ըլլալ							
1	2	3	4	5	6	7	8
Զինուորցուին հիւանդկախ եւ կամ ֆիղիքալէս անկարող հայրը եւ այրի մայրը:	"	"	"	"	"	"	"
Զինուորցուին կինը	"	"	"	"	"	"	"
Զինուորցուին հիւանդկախ եւ կամ ֆիղիքալէս անկարող մեծ հայրը եւ կամ այրի մեծ մայրը:	"	"	"	"	"	"	"
Զինուորցուին կոյս կամ ամուս- նացած քոյրը, հիւանդկախ եւ կամ ֆիղիքալէս անկարող եւ կամ 16 տարեկանէն եղբայրները վոքը	"						
Զինուորցուին կոյս կամ ամուս- նացեալ քեռաղջկները եղբօրաղ- ջկները եւ 16 տարեկան վոքը քեռորդիներն ու եղբօրորդիները.	"						
Զինուորցուին չոմուսնացած աղջկներն ու 16 տարեկանէն վոքը մանչ զաւակները:		"	"	"	"	"	"

Այս անձերէն՝ հայրը նեցուիլ կը համարուի երբ  
նոյն գաւառակին մէջ կը բնակի, գաւակը, եղբայրը՝  
մեծ հայրը և աները՝ երբ նոյն պիւղին և թաղին մէջ  
կը բնակին, իսկ մնացեալները երբ նոյն տան մէջ կը  
բնակին :

Յ07. 51.— Այս նեցուկները պէտք է առնուազն  
16 տարեկան ըլլան ֆիզիքական ու նիւթական վիճակ-  
նին թոյլատու ըլլալու է :

Գիշերօթիկ վարժարանաց ու ոանողները, բան-  
տարկեալները, գէնքի տակ զտնուողները և կենդանի  
կամ՝ մեռած ըլլալը յայտնի չեղողները մուխն չեն  
նկատուիր :

Յ07. 52.— Նախարդ ցուցակին մէջ յիշուած ան-  
ձերը որպէսզի օգնութեան կարօտնկատուին, պէտք է որ՝

Ա. յիշեալ ցուցակին մէջ իբրև մուխն ցոյց տրուած  
ազգականները գոյութիւն չունենան :

Բ. իրենց գաւառակին տեղական դիներուն հա-  
մաձայն իրենց մնունզին բաւարար չափով տարեկան  
եկամուա չունենան :

Գ. Երկրագործութեամբ, առետուրով և արհես-  
տով ու նման գործելով զբաղուած չըլլան :

Հասոյթ կը նկատուին թոշակները և յօտկացեալ  
գումարները ուրկէ և, ի՞նչ կերպով որ ստացուին :

Զէնքի տակ առնուող դինուորներու հարստու-  
վթւնն ու եկամուաթը, որպէս օգնութեան՝ կարօտ ազ-  
գականներուն հարստութիւնը և եկամուաթը կը նկատուի :

Տեղական կառավարութեան միջոցով, իրենց յատ-  
կացեալ ամսաթոշակներով միասին թաղապետութեան  
կամ ծերերու ժողովին կը յանձնուին անոնք՝ որոնք  
զիրենք պաշտպանող հեռաւոր կամ մօտաւոր ազգական-

Ներ չունին և որբ , խուլ , յիմար , անդամազուրիլ , գաւածած են , ըլլալով ուրիշներու զործնական օգնութեան կը կարօաին և որսնց օգնութեան կարօտ ըլլալը դինուս պաղբութեան ժողովներուն քննութիւններէն եւ կամ ի հարկին կատարուած քննութիւններէ հաստատուած է :

Այն զինուորդուները , որոնք կալուածներ ունենալով զանոնք յանձանձող մօտաւոր կամ հեռաւոր կամ մօտաւոր ազգականներ չունին , կրնան դիմել կառավարութեան , որ անոնց յանձանձումը պիտի ապահովէ :

Յ07. 53. — Օրէնքով օգնութեան կարօտ անձեռը , պայման է որ վերջնական քննութենէն առաջ , զինուորդուներուն կողմէ հոգացուին ու սնանկած մարդ մը իր բնտանիքէն զտու միայն մէկ անձի համար Առին պէտք է րլւն , մուինը կը համարուի անոր՝ զոր իրենք կը փափաքին , իսկ մուիններուն համար քննութիւն կը կատարուի թէ օգնութեան կարօ՞տ են թէ ոչ :

Յ07. 54. — Այն անձերուն անունները , որոնց օգնութեան կարօտ ըլլալը ժողովին կողմէ հաւատառուած է , քննութեան ցուցակներէն կ'արձանագրուին և ժողովին կաղմէ վաւերացուելէն յետոյ 49րդ . յօդուածին համաձայն զործողութիւն կատարուելու համար Ելմտական պաշտօննեային կը յանձնուի :

Յ07. 55. — Օգնութեան կարոտ անձերու յատակացուելիք ամսաթոշակները առանց ժամանակ կը որսընցնելու թաղերուն կամ զիւղերուն ծերերու ժողովին ներկայութեան և նոյն մարմնոյն կողմէ վաւերացեալ ստացագրի փոխարէն այդ անձերուն յանձնուելու համար Ելմտական հարկահաւաքներուն միջոցաւ պիտի դրկուին :

## ՎԵՐԱՓՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՅՕԴ. 56. — Զինուորագրութեան գործողութիւններուն և զինուորագրութեան ժողովներուն դէմ բողոքողներու գանգատները քննելու համար իւրաքանչիւր զօրաբաժնի շրջանակին մէջ վերաբննիչ յանձնաժողով մը կը գտնուի :

Այս յանձնաժողովը հետևեալ անձերէն կը բաղկանայ .—

1. — Զօրաբաժնի զինուորագրութեան դիւանի նախադահը ,

2. — Զօրաբաժնի հրամանատարին կողմէ նշանակուելիք բարձրաստիճան ոպայ մը .

3. — Կուսակալներու և անկախ անձազներու մէջ միւթէսարքներու կողմէ նշանակուելիք անձ մը :

4. — Երկու զինուորական բժիշկներ : Առնք միայն բժշկական քննութեան վերաբերեալ խնդիրներու մէջ ձայն ունին :

Այս յանձնաժողովին նախադահաւթիւնը կ'ստանձնէ իրենց մէջ ամէնէն բարձր աստիճաննը ունեցող զինուորականը իսկ քարտուղարութիւնը կը կատարէ զօրաբաժնի հրամանատարին կողմէ նշանակուած սպայ մը՝ որ ձայն պիտի չունենայ :

Վերաբննիչ յանձնաժողովները իրենց պաշտօնը լրացուցած պիտի ըլլան՝ իրենց զօրաբաժնի շրջանակին մէջ գտնուղ գաւառակի կեդրոններու մէջ վիճակարկութեան գործողութիւններու վերջաւորութիւնէն ըստ կսեալ մինչեւ Սեպտ. 15ը . Հետևեաբար իւրաքանչիւր

զօրաբաժնի շրջանակին մէջ քննութեան ո՞ր թուականին, և որտեղէն սկսուելը զօրաբաժնի հրամանատարին կուսականներուն, իսկ անկախ սահմագներու մէջ միւթէսարբֆներուն միջն բանակցութեամբ որոշուելով, կը հաղորդուի առ որ անկ է :

Վերահսկիչ յանձնաժողովին նահագահը, յանձնաժողովին ժամանումէն 18 օր առաջ, տեղական պաշտօնէութեան միջոցաւ կը ծանուցանէ ժողովուրդեան թէ ո՞ր օրը ո՞ւր պիտի դանուի :

ՅՕԴ. 57. — Վերագննիչ յանձնաժողովին նահագահը կ'առնէ զինուորագրաւթեան ձիւղին քով զրտուած վերջնական քննութեան ցուցակները, և կուսականներն և կամ կառավարիչներուն կողմէ նշանակուած անձերն ալ կ'առնեն զինուորագրութեան ժողովներու նախագահներուն քով գանուածնրը և հետեւեալ գործողութիւններով կ'զրադին : Յանձնաժողովներուն կողմէ որոշումներն մեծամնասնութեամբ կը արուին :

1. — Զինուորագրութեան ժողովի անդամներէն մէկուն կամ միւսին կողմէ օրինաւոր կերպով եղած գրաւոր զիազողութիւնները քննել,

2. — Զինուորագրութեան ժողովներուն կողմէ յունց զինուորական ծառայութիւնը գործնականապէս կատարելու անկարող որոշուած զինուորացուները անպայման մէկիկ մէկիկ բժշկական քննութենէ անցնիլ և այդպէս ըլլալուն համոզում գոյացուցածներուն հիւսնդութիւնը, անոնց քով գտնուած աղօքաններուն մէջ նշանակել և վաւերացնել,

3. — Բժշկական քննութենէ անցնել այն մուինները, որոնք հիւսնդկախ ըլլալնին կը յայտաբարեն,

4.— Քննիչ բողոքները անոնց՝ որոնց զինուորակրութեան ժողովը օգնութեան կարօս չըլլալնին որոշած էր :

Անոնք որոնք անձամբ վերաքննիչ յանձնաժողովին ներկայանալու կարող չըլլալու աստիճան հիւանդկախ կամ անկարող ըլլալնին կը տեղեկացնեն, պիտի քննուին յանձնաժողովին մէջ գտնուած բժիշկներուն կողմէ իրենց գտնուած տեղին վրայ :

5.— Զինուորական գործողութեանց վերաբերեալ բոլոր զանգատներն ու բողքներն քննելու,

6.— Անցեալ տարիներու զինուորազրութեան ժողովներուն անձամբ չներկայացողներն, կամ երբ անձամբ չեն ներկայացած, իրենց ընկերներուն հաւաքուած ու դրկուած ատեն դիմում չընողներուն և իրենց դրկուած պահուն համբէն փախողներու ձերբակալութեան մասին, անունները տեղական կառավարութեան տրուած զինուորցուներու մասին կատարուած հետապնդումներուն աստիճանը քննել :

7.— Օրինաւոր պատճառներով նոյն տարին զինուորազրութեան ժողովին անձամբ կարող չներկայանալով և իրենց պատճառները վաւերացուած վկայագրով մը չդրկելնին ալ կարգ մը արգելքներու հետեւանքը ըլլալը յայտարարողներուն պահանջները քննելու իրենց յաջորդ տարուան թողուելիքները զատել և վիճակարկութիւն կատարել պէտք եղածներուն թիւերը, Յուրգ յօդուածին վերջին հատուածին մէջ բացայայտուին բացագրուած կերպով քոչել :

Յ07. 58.— Զինուորական ծառայութիւնը գործնականապէս կատարելու անկարող ըլլալնունն մասի

զինուորագրութեան ժողովներու կողմէ որոշուածներէն անոնք, որոնք քննութեան պայմանաժամուն մէջ վերաքննել յանձնաժողովին չներկայանալով հանդերձ իրենց արգելքները չայտնողները, բժշկական քննութիւններէն հատարուելու համար կառաջարութեան միջնոցով ամենէն մօտիկ զուղովի կեզրոնները աղայ մերժելի կը դրկուին :

80Դ. 59. — Վերաքննիչ յանձնաժողովին քննութեանց օրէնքները քննութեան ցուցակներուն մէջ մասնաւոր տեղերը կ'արձանագրուին, և իւրաքանչիւր գինուորագրութեան ճիւղի չքջանակին քննութիւններէն վերջ երկու օրինակ տեղեկագիրներ կը պատրաստուին որոնք, վերաքննիչ յանձնաժողովին անդամներուն կողմէ սաորագրուելէ յետոյ, մէկ օրինակը գօրաբաժնի հրամաննատարին կը արուի միւս օրինակն ալ կուսակալի կամ միւթէսարիֆին կ'ուղարկուին, իսկ զինուորագրութեան ճիւղերէն և զինուորագրութեան ժողովի նախադահներէն առնուած ցուցակները կը վերագրածուին : Զօրաբաժիններու հրամաննատարները, վերաքննիչ յանձնաժողովին դրկուած տեղեկագիրներուն վրայ, իրենց իրաւասութեան սահմաններու մէջ եղած գործողութիւնները և իրենց խորհրդածութիւնները կ'աւելցնեն և մինչև Հոկտեմբերի վերջը զօրաբանակի հրամաննատարութեան կը դրկին, որը իր կարգին, իր իրաւասութեան մէջ գանուած գործողութիւնները կը կատարէ, խորհրդածութիւնները կ'աւելցնէ և մինչև Դեկտեմբերի վերջը պատերազմական նախարարութեան կը դրկէ :

## ՆՈՐԱԳԻՐ ԶԻՆՈՒՈՐՑՈՒՆԵՐՈՒՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՅԱՏԿԱՑՈՒՄԸ ԵՒ ԱՌԱՔՈՒՄԸ

ՅՕԴ. 60. — Բոլոր զօրաբանակները և անկախ գօրաբաժինները, ծովային նախարարութիւնը, զինուուրական շինութեանց վարչութիւնը, սստիկանութեան հրամանատարութիւնը, և ուրիշ զինուրական շրջանակներն ու հարսառութիւնները, ամէն տարի ընդ սովորութեան, զէնքով կամ առանց զէնքի ծառայեցուող ցըրուելիք զինուորներու թիւն ու գատրօնները լեցնելու համար պէտք աեսնուած զէնքով կամ՝ առանց զէնքի ծառայեցուիլք նորագիր զինուորներուն թիւը ներկայացընող նկարօտութեան ցուցակները « մինչև մայիսի վերջը պատերազմական նախարարութիւն մրցուած ըլլալու են :

ՅՕԴ. 61. — Սոյն „Կարօտութան ցուցականներն և 40րդ յօդուածին մէջ ցոյց արուած վիճակազրական ցուցակներուն հասնելէն յետոյ, պատերազմական նախարարութիւնը հարկ եղած քննութիւնները կը կատարէ, ցամաքային ու ծովային դասակարգերու և ուրիշ հաստատութիւններու համար պէտք եղած զինուորցուներն թիւը, որ յարմար դատած այսքան առ հարիւր աւելքովը, որու համեմատութեամբ, զօրաբանակներու զինուորազրութեան շրջանակներն կը բաժնէ, և ցամաքային ու ծովային դասակարգերուն և զանազան կազմակերպութիւններուն եղած յատկացումները զօրաբանակներուն և ուրիշ շրջանակներու կը հաղորդէ :

Նորագիրները հոկտեմբերին դասակարգերը մտած պիտի ըլլան : Զինուորներն հատումի մասին հրաման աըրուած ըլլալը ծառայուելու համար կը տեղեկացուի ներքին և արտաքին գործաց նախարարութիւնները :

Զօրաբաննակներու հրամանատարները , պատերազ-  
մական նախարարութենէն առնելիք հրամանին համա-  
ձայն , զօրաբանակի զինուորագրութեան շրջանակէն  
զէնքի տակ առնուիլը պէտք եղած զէնքով և առանց  
զէնքի զինուորցուներու քանակին և նոյն տարին թիւ  
քաշող զինուորցուներէն զէնքով և առանց զէնքի ծա-  
ռայութեան համար զատուածներու թիւին մէջ գըտ-  
նուած համեմատութեան համաձայն իւրաքանչիւր զօ-  
րաբաժնի զինուորագրութեան շրջանակէն առ հարիւր  
քանի՛ համեմատութեամբ նորագիրներու հաւաքուիլն  
ու յատկացման վայրերը կը հաղորդէ զօրաբաժիննե-  
րուն , անոնք ալ նոյն կերպով կը հաղորդեն զինուո-  
րագրութեան ճիւղերուն և գունտերու հրամանատար-  
ներուն :

Յ0Դ. 62.— Զինուորագրութեան ճիւղի նախա-  
դահը , առաքուիլը հարկ եղած զէնքով և առանց  
զէնքի ծառայութեանց մէջ գործածուելիք զինուոր-  
ցուներսւն , զիւղի և թաղի կարգով անունները պարու-  
նակող երկու օրինակ ցուցակներ կը կազմէ , և այս  
ցուցակներուն մէջ յայտնուած անձերն ո՛ր օրը զին-  
ուորագրութեան ճիւղի կեդրոնը դանուիլը նշանակե-  
լով նոյն տեղույն ամենէն մեծ քաղաքային պաշտօն-  
եային կը յանձնէ :

Յ0Դ. 63.— Քաղաքային պաշտօնեան , իր ստա-  
ցած ցուցակները ոստիկանապետին կը յանձնէ : Ոս-  
տիկանապետն ալ , ցուցակներուն մէկը զիւղին կամ  
թաղին ծերերուն ժողովին կը յանձնէ որ անոնք տե-  
ղեկացնեն զինուորցուները , և իրենց չկրցած պա-  
րագային անոնց ծնողքին կամ ազգականին յայտնեն  
թէ , ո՛ր օրը զինուորագրութեան ճիւղին կեդրոնը պի-

տի գանուին , իսկ միւսը սոյն մարմնոյն վաւերացնել տալով , զինուորագրութեան ճիւղին զրկուելու համար , կը վերադարձնէ քաղաքական պաշտօնեային : Սոյն հաղորդումը օրինական հրաւէր կը նկատուի , հոգ չէ թէ զինուորցուն ուր կը գանուի :

Յ0Դ . 64 . — Որոշեալ օրը , եթէ հրաւիրուած զինուորցուներէն չեկողներ գանուին , ասոնց գալ չկարենալը հիւանդութեան և բանտարկութեան պէս օրինաւոր պատճառներու հետեւանք ըլլալն ու չըլլալը Մէջլիսի խտարէին կողմէ ծերերուն ժողովէն և զինուորցուներու ընկերներէն կ'ստուգուի , և առանց արգելքի չեկողներուն մասին 110րդ յօդուածին տրամադրութեան համաձայն գործողութիւն կատարուելու համար իրենց զինուորագրութեան տոմարներուն (քիւնիէ) մէջ քացարութիւն կը տրուի և ասոնց անունները ցուցակներէն հանուելով , հետապնդելու և ձերբակալելու համար քաղաքային իշխանութեանց կը յանձնեն :

Յ0Դ . 65 . — Առաքուելիք զինուորցուներուն առաքման թուականը և կազմաւորումի տեղը ձըզտաններուն մէջ կը նշանակուի և երթալիք տեղերուն համաձայն ըստ օրինակին զատ զատ երկու օրինակ առաքումի տոմարներ կը կազմուին և զինուորցուներուն ու առաքման պաշտօնեաններուն կը յանձնուին , և առաքման ծախքերն ալ մուրհակով կը յանձնուին :

Առաքման պաշտօնեանները կ'ընտրուին սպաներէ և ենթասպաններէ , և ի հարկին անոնց բաւականաչափ ոստիկաններ կը տրուին : Փոքրիկ խումբերը միայն ոստիկանի միջոցով կը զրկուին :

Յ0Դ . 66 . — Առաքումի պաշտօնեան , որպէս զի

զինուորցուները ճամբան նեղութիւն չքաշեն , իջավայրերը կը կեցնէ , և երբ հասնին իջավայրերը , յարմար տեղեր կը տեղաւորէ , անոնց օրականները իր ձեռքով անոնց ձեռքերուն կը յանձնէ և ի հարկին հարկ եղած օդնութիւնները կ'ընէ : Առաքման պաշտօնեանները արգիլուած են ճամբան զինուորցուներուն հանդէպէ և է գէջ վարմունք ունենալէ :

Երբ զինուորցուններէն փախչող կամ ձերբակալուածներ և կամ փախչելու կասկածուողներ գտնուին , ասոնց սահմանուած տեղերնին զրկուելու համար , ամենէն առաջ մտնելիք տեղոյն ոստիկանապետին կը յանձնուի : Զինուորցուններուն առաքման միջոցին , քաղաքային և ոստիկանական պաշտօնեանները պարտաւոր են օդնութիւններ և դիւրութիւններ ցոյց տալ երբ առաքման պաշտօնեանները կը դիմեն :

80Դ . 67 . — Զինուորցունները երբ գունդերուն հասնին՝

Ա . — Առաքման պաշտօնեաններուն տարած տոմարներուն և հասնող զինուորցուններուն կօդլաւնները կատարուելով ներկայ եղողնները կը յանձնուին և անուններնին նշանակուելով ընդունուած ըլլալնին պարունակող երկու օրինակ ցուցակներէն մին վաւերացուելով զինուորագրութեան ճիւղէն արուելու համար առաքման պաշտօնեային կը յանձնուի :

Բ . — Ծնդունուած զինուորներէն բժշկական քննութիւնները կատարուած և ճիւանդկախութիւնները հաստատուածներուն ճիւանդկախութիւնները հաստատուածներուն , և այս միջոցին . եթէ զինուորաթենէ աղաւելու համար զիտմամբ իրենք զիրենք վիրաւորողներ և ճիւանդացածներ զանուին , ասոնց մասին 108րդ

յօդուածին մէջ տրամադրուածին համաձայն գործողութիւն կառարելու համար տեղեկագրով մը պաշտօնաթուղթեան կը յանձնուին :

Դ. — Սոյն նորագիր զինուորցուներուն յատկացաւած տեղերը հասնելէն առ առաւելն 15 օր վերջ, իւրաքանչիւր գունդի և անկախ վաշտի հրամանաւարը, իր գունդը և վաշտը հասած նորագիրներու առողջական և ընդհանուր վիճակներուն մասին ըստ օրինակին պատրաստուելիք ցուցակը զօրաբաժնին կը դրկէ, որի կարգին զօրաբանակին կը դրկէ :

Զօրաբանակները այս ցուցակները հիմ բռնելով տարեկան զէնքի տակ առնուող զինուորներու յատկութեանց մասին վիճակագիրներ կը պատրաստուին :

Յ0Դ. 68. — Առաքման գործողութեան լրանալէն յետոյ, իտարէ Մէջլիսիին կողմէ առաքուածներու և արտօնեալ զինուորցուներու անուշները պարունակող և զատ զատ պատրաստուելիք առմարները ելմտական պտշտօնէութեան կը յանձնուին, և առաքման թուականէն սկսեալ մինչեւ 2 ամիս արտօնեալ զինուորցուները կանչուելով իրենց արտօնեալ ըլլալը ճշտանաներուն մէջ կը նշանակուի :

## ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՏՈՒՐՔ

Յ0Դ. 69. — Զինուորական տուրքի ենթարկուելիք անձերը հետեւեալներն են,

1. — 46րդ յօդուածին առաջին և երկրորդ հառուածներուն և 106րդ յօդուածին երկրորդ հատուածին

մէջ յիշուածներէն անոնք , որոնց զործնականապէս զինուորական ծառայութիւն ընկլու կարող չրլալնին հաստատուելով զինուորական պարտականութիւնէ զուրս հանուած էն , և 46րդ յօդուածին երրորդ հատուածին մէջ յիշուածներէն անոնք , որոնք 35 տարին լրացնելով հանգերջ տակաւին աքսորի և բերդարդելութեան պատիմները չեն լրացուցած , և 48րդ յօդուածին առաջին հատուածին մէջ յիշուածին համեմատ 5 տարիէն աւելի տեւողութեամբ թիաղարտութեան գատապարտուելով զինուորական ծառայութիւնէ , զուրս թողուած էն :

2. — Անոնք որ իրենց վիճակարկութեան թիւով , պահանջուածէն աւելի բլլալով , արտօնութեան իր կամ առժամանակէս իրենց տուները դրկուած էն :

3. — Անոնք որ որինական արամագրութիւններու չհնազանդելէ տարբեր պատճառներով առժամեայ աքսորի և բերդարդելութեան գատապարտուած բլլալով և կամ մուհաճիր բլլալով 35 տարին լրացնելով հանգերձ զէնքի տակ տոնուած չրլալնին քննութեամբ հասկցուած է :

30Դ. 70. — 69րդ յօդուածին համեմատ զինուորական առւրքի ենթարկուածները , իրենց մասին կատարուած զինուորական զործողութեան լրացած տարւոյն յաջորդող տարիէն կ'սկսին տուրք տալ : Յիշեալ յօդուածին առաջին հատուածին մէջ բացատրուածները՝ մուլազզաֆի շրջանը եղող քսան տարւոյ համար , երկրորդ հատուածին մէջնները զէնքի տակէ արտօնուելիք միայն երկու տարուան համար , և երրորդ հատուածին մէջ յիշուածները իրենց տարիքին համե-

մատ մնացեալ իհթիյաթի չրջանին համար դինուորական սուրբի ենթակայ են :

Յ0Դ. 71. — 69րդ յօդուածին համաձայն զինուորական սուրբի ենթարկուածներէն՝

Ա. — Իրենց ֆիդիքական կազմով, առողջական վիճակով և մտային կարողութեամբ անընդունակ ըլլալով, անձամբ գործ մը կատարելու կարող չեղողները և իրենց զաւառակին տեղական գիներուն համաձայն, իրենց ապրուստին բաւական եղածէն աւելի տարեկան եկամուտ չունեցողները .

Բ. — Զինուորական ծառայութեան մկան եղած տաեննին նոյն ծառայութիւնը կատարելու անկարող վիճակի մասնուողները .

Գ. — Ապրուսանին ճարելու կարող րլլալով չահերնին՝ իրենց զաւառակին տեղական գիներու համաձայն, ապրուստնին սովահովելու չափեն աւելի չրլալով հանդերձ, սուրբը վճարելու բաւականաչափ եկամուտ չունեցողները :

Դ. — Դրամական փրկանք (պէտէլ ի նազտի) վրձարողները զինուորական սուրբք զերծ են :

Յ0Դ. 72. — Զինուորական տուրքը երկու տեսակէ, որոշ (մաղթու) և յաւելեալ : Որոշ տուրքը տարեկան 52 դրչ. է :

Ցաւելեալ տուրքը անշարժ կալուածներու իսկական սուրբին 5 առ հարիւրը, թէմէթթիւի իսկական սուրբին մէկ քառորդը, և ընդհանուր ելմտացոյցին մէջ գտնուի թէ ոչ, ընդհանուր պեսական պաշտօնաբաններէն և պաշտօնական հաստատութիւններէն առնուած ամսականներուն և յատկացեալ դումարներուն տարեկան գումարին 1 առ հարիւրն է :

Տուրքին գանցումը ելմտական նախարարութեան կողմէ յատուկ կանոնազրով մը պիտի բացատրուի և որոշուի :

## ՄԷԿ ՏԱՐԻ ԿԱՄԱՒՈՐ

Յ07. 73.— 19 տարեկանը լրացնելով 20 տարեկանին թեւակոխող դինուորցուներէն անոնք որոնք զինուորազրութեան ժողովին դիմելով յաջորդ տարտան համար տարի մը կտրմաւոր ըլլալ կ'ուղեն, կ'ընդունուին եթէ հետեւեալ պայմանները լրացնեն .

1.— Կալուածներու և հողերու տէր երեւելիներու և իրատելի պետական պաշտօնեաներու կամ առնցմէ հանգստեան կոչուողներու գաւակ ըլլալ .

2. Ֆիդիքական կարողութիւնները զինուորութեան թոյլատու ըլլալ .

3.— Արժանապատութեան արատարեր արարքի մէջ գտնուած ըլլալուն հաստատուած կամ տարածուած չըլլալը աեղական կառավարութեան կողմէ վաւերացուած ըլլալ .

4.— Ոչ հեծեալ դասակարգերուն կամաւոր մանողները 25 ոսկի տալու, և հեծեալ դասակարգերու մէջ մանել ուզողներուն ալ կամ 25 ոսկի տալու և կամ 25 ոսկի արժէքով և պահանջուած պայմանները լրացնող անասուն մը միասին բերելու մասն աեղական կառավարութեան հարկ եղած երաշխաւորութիւնները ցոյց տալ .

5.— Հնգամեայ երկրորդական վարժարաններէն վկայականով ելած և կամ պաշտօնական Սուլթանիէ

վարժարաններուն այս աստիճանը ունեցող կարգերէն վկայագիր առած ըլլալ , կամ կրթական նախարարութեան քննութեան և հսկողութեան ենթակայ տեղացի և օտար վարժարաններու նոյն ուսման աստիճանին հաւասար կարգերէն եղած և կրթական նախարարութեան պաշտօնական վարժարաններուն հրդ տարւոյն քննութիւնները տալով պաշտօնական վկայագիր առած ըլլալ :

Յ0Դ. 74. — Մէկ տարի կամաւորները մինչեւ իրենց տարեկիցներուն լիճակարկութիւնը, 25 ոսկին ամբողջը մէկէն և կամ երկու մասնավճարով կլմտական մնաւուկներուն վճարելէ յետոյ , իրենց փափաքած կանոնաւոր դասակարգերու մէջ աարի մը կը ծառայեն , և անոնք որ բաւականաչափ արժանիք ցոյց կուտան , իրեւ պահեստի ենթառապայ կ'արձակուին , իսկ եթէ ասոնց մէջ ծառայութեան միջոցին աւելի մեծ արժանիք ցոյց տուողներ ըլլան , անոնք ալ վերջէն պահեստի սպայից կանոնազրին մէջ որոշեալ կրթութիւնը ստանալու և ծառայելու կանչուելով , գունդերու հրամանատարներու տեղեկագրութեան և տեսնուած պէտքին համաձայն պահեստի սպայ կ'անուանուին :

Յ0Դ. 75. — Այս կերպով կամաւոր գրուողները՝ դինուորական մարզանքի և պարտականութեանց ամենուն մէջ ալ ներկայ գտնուելու պայմանաւ , և եթէ զօրաբաժնի հրամանատարութեան կողմէ կարգապահութեան հակառակ չտեսնուի , ոսմիկները պետութեան հաշլոյն անցուելու պայմանաւ զօրանոցէն գուրս ուտելու և պառկելու կ'արտօնուի : Ցիշեալ դինուորները իրենց հագուսաները իրենք պիտի հայթայթեն :

ԱՐՏՈՆԵԱԼ, «ԻՀԹԻՑԱՅ» ԵՒ «ՄԻԿՍԹԱՀՅԲ»

ԶԵՆՈՒՈՐՑՈՒՆԵՐՈՒՆ ՎԵՐՍԲԵՐԵԱԼ, ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԵՐ

ՅՕԴ. 76. — 7րդ յօդուածին համեմատ ցամաքային և ծո լային գտասկարդերու մէջ զէնքով ծառայութիւնը լրացնելով արձակուողները իհթիյաթի և իհթիյաթի շրջանը լեցնողները միւսթահֆրդի կը փոխաղրուին, և իրենց գտասկարդին համեմատ իհթիյաթ և կամ միւսթահֆրդ շրջանը լրացնողները զինուորական ծառայութենէ զուրս կը հանուին :

Սոյն փոխաղրութեան դործողութիւններուն համար, զինուորներն 21 տարեկանը լրացնուցած տարւոյն յաջորդող տարւոյն Մարտ ամիսը միչտ սկզբունք կ'ընտրուի :

ՅՕԴ. 77. — ԶԵՆ.ՓԻ տակ ծառայութիւնը լրացնող զինուորներուն ցրուումը կայսերական իրատե՛ն ստացուելէ յետոյ պատերազմական և ներքին դործոց նախարարութիւններէ հրամանատարութեանց հաղորդուելք հրամանին վրայ կը կատարուի :

ՅՕԴ. 78. — Արձակուելիք զինուորներուն ճըզանին մէջ արձակման պարագան պիտի նշանակուի դումարտակին, զինուորական հաստատութեանց և կամ ծառայած նաւուն հրամատարներուն կողմէ. նաև հրամատարները զինուորին պատկանած զինուորադրութեան իւրաքանչիւր ճիւղին համար զատ զատ ցուցակներ պատրաստելով նոյն ճիւղերը կը զրկեն :

ՅՕԴ. 79. — Զինուորագրաւթեան ճիւղերը թէ՛ նոյն ցուցակներուն մէջ նշանակուած զինուորներուն և թէ անոնց տարեկիցներէն կը ճատեալ պայմանաժամով

զինուորական ծառայութիւն մատուցանելով , կամ մէկ տարի իբրև կամաւոր ծառայելով և կամ դրամական պէտէլ վճարելով արձակուողներուն , արտօնուածներուն և կամ օդափոխութիւն գացողներուն ճգտաններուն մէջ կը նշանակին իհթիաթի կարգը փոխադրուած ըլլալնին : Յեսոյ 81րդ յօդուածին համաձայն քաշուելիք թիւերուն կարգով կ'արձանագրեն իհթիաթի տուարին մէջ :

Յ0Դ . 80 . — Արձակեալ զինուորներէն իրենց ծընընդավայրերը երթայիքները , հոն համներէն մինչեւ երկու ամիս զինուորագրութիւնն ճիւղին կը գիմեն , իրենց ծննդավայրէն գուրս մնացողները գարձեալ մինչեւ երկու ամիս իրենց բնակելիք վայրին ևնթակայ եղած զինուորագրութիւնն ճիւղին և զինուորագրութիւնն ճիւղի կազմակերպութիւն չունեցող տեղերն այ քաղաքային ամենէն մեծ պաշտօնեաններուն գիմելով արձակուած րլլալնին կը ծանուցանն և ճրգտաննին ցոյց տալով արձանագրել կուտան : Իրենց ծննդավայրերէն գուրս մնացածներուն համար իրենց ծննդավայրի զինուորագրութիւնն ճիւղերուն կամ քաղաքային պաշտօնեացին միջոցաւ անոնց պատկանած զինուորագրութիւնն ճիւղին պիտի տեղեկագրուի : Օտար երկիր եղթալիքները ու և է զինուորագրութիւնն ճիւղի մէջ արձանագրուելէ ետքր ճամբայ պիտի ելլեն :

Յ0Դ . 81 . — Զինուորագրութիւնն ճիւղի նախագահները իրենց շրջանակին պատկանող և արձակուող զինուորներուն համար զինուորական շրջանակներէն դրկուելիք ցուցակները երբ ստանան , թէ՛ այդ զինուորներուն և թէ անոնց տարեկից և կամ կրծատեալ ծառայութիւնները կամ պէտէլ վճարելով զինուորական

պործօն ծառայութիւնը աւելի առաջ լրացնողներուն և  
կամ արտօնուածներուն թիւերը անոնց բացակայու-  
թեանը և անոնց պատկանած կարգերուն համաձայն  
զատ զատ թիւերը կը քաշեն և ատսնց համեմատ  
մասնաւոր տոմարի մը մէջ կ'արձանագրեն ետքը մր-  
նացած ըլլալը, տոմարներուն մէջ անոնց պատկանած  
կարգերուն թիւերէն ետքը թիւ քաշուելով կ'արձա-  
նագրեն իրենց տարեկիցներուն իհթիաթի տոմարն ան-  
ցրնելու համար :

Այս կերպով պատրաստուելիք տոմարներուն պա-  
րունակած և զանազան կարգերու պատկանող իհ-  
թիաթի զինուորներուն քանակութիւնը կը նշանակուի  
տառաջին տառաջին անգամ պատրաստուելիք զինուորա-  
կան ընդհանուր զորութեան ցուցակներուն մէջ։ Ցուցակ-  
ները զօրաբաժիններուն կը զրկուին, զօրաբաժինները  
զօրաբանակներուն կը զրկեն և զօրաբանակներն ալ  
պատերազմական նոխարարութեան։

Յ07. 82. — Ա.մէն տարի իհթիաթը փոխագրուող  
զինուորները կը կոչուին իհթիութի զինուոր այն տար-  
ուան, ուր 21 տարին մասն են ։ Կաեւ Մուսթահֆրզ-  
ները։ Օրինակի համար, 1330 տարին արձակուած և  
1307ին ծնած զինուոր Ֆը երր Իհթիաթը փոխադրուի  
1328ի տարուան իհթիաթ կը կոչուի և Մուսթահֆրզ-  
ներուն համար ալ նոյնը կ'ըլլայ։

Յ07. 83. — Ա.մէն տարի իհթիաթը փոխագրուող  
զինուորներուն համար բանուելիք տումարը, այդ  
զինուորներուն Մուսթահֆրզներու կարգը փոխագ-  
րուելէն ետքը, Մուսթահֆրզի տումարը կը կազմէ։  
Արձանագրութեան գործողութիւնները միշտ այդ տու-  
մարին համաձայն կը կատարաւին։ Ո և է պատճառով

իրենց տարեկիցներէն ետքը Իհթիաթի կամ Մուս-  
թահքրդի կարգը փոխազրուղները , նոյն տումարին  
մէջ իրենց կարգերուն ամեննեն վերջը արձանագրուե-  
լով , վերջին թիւէն ետքը եկող թիւը կ'ընարուի իրենց :

### ԱՐՑՈՆՈՒԱԾ ԻՀԹԻԱԹ ՈՒ ՄՈՒՄԹԱՀԳԻԶ

#### ԶԻՈՆՈՐՆԵՐՈՒՆ ԿՈՉՆ ՈՒ ԱՌԱԲՈՒՄԸ

Յ09. 84.— Կրծատեալ ծառայութեան ենթակայ ,  
կամ իրեւ կամաւոր մէկ տարի ծառայելէ ետքն ար-  
ձակուած զինուորներն և արտօնուած , Իհթիաթ ու  
Մուսթահքրդ զինուորներն ի հարկին և պէտքին հա-  
մաձայն մասամբ կամ ամբողջութեամբ կրնան զէնքի  
տակ հրաւիրուիլ ընդհ . կամ մասնակի պատերազմա-  
կան վիճակի , մարզանքի , ուազմափորձի և ներքին  
բարեկարգութիւնն ապահովելու համար : Ծնդհ . կամ  
մասնակի պատերազմական վիճակի համար զինուորնե-  
րուն զէնքի տակ կոչուիլը կայս . իրտաէով տեղի  
կ'ունենայ . մարզանքի ու ուազմափորձի համար ալ  
պատերազմական նախարարութեան հրամանով . իսկ  
ներքին բարեկարգութեան համար ալ զօրաբանակնե-  
րու հրամատարներուն հրամանով տեղի ունեցած կոչ-  
գործադրուելէ ետքն իրողութիւնը անպատճառ կը մա-  
տուցուի վեհապետին :

Յ09. 85.— Զինուորներու կոչը կը կատարեն-  
գինուորական ու ոստիկանական բոլոր պաշտօնեաները ,  
գիւղերու և թաղերու մուխթարներն ու ծերոց ժողով-  
ները , կուսակալները , կառավարիչները , դայմագամ-  
ներն և գիւղախումբերու միւտիրները :

ՅօԴ. 86. — Մասնաւոր կանոնագրով մը պիտի սահմանուի զինուորներուն կոչին ու հաւաքման եղանակին և այդ մասին պաշտօնեաներու հաւաքման եղանակին և այդ մասին պաշտօնեաներու պարտական նութեան կիրառումը :

ՅօԴ. 87. — Երբ զէնքի տակ կոչուելիք զինուորներուն համար հրաման տրուած չէ որ ուղղակի իշխնց պատկանած շրջանակին երթան, այդ պարագային զինուորներն պիտի հաւաքուին զինուորագրութեան ձիւղերուն կեղբոնները : Տեղւոյն Խտարէի ժողովին և զինուորագրութեան ձիւղին նախագահին ու ոսպաներուն ներկայութեանը Յ4րդ յօդուածին տրամադրած գործողութիւնները պիտի կատարուին ներկայացողներու և բացականերու մասին : Յետոյ Յ5րդ յօդուածին համաձայն, արձանագրութեան տումարներով լշենց համար որոշուած տեղերը պիտի զրկուին : Հրաւէրին չներկայացողները գտնելու և ձերբակալելու համար տումարները պիտի յանձնուին անզական կառավարութեան : Անոնց համար որ հիւանդութեան ու մէկ ասարիէն աւելի բանտարկութեան հետեւանքով կարելի չէ եղ սծ իրենց ընկերներուն հետ զէնքի տակ առանել, անոնց ասողջանալէն կամ ազատ արձակուելէն ետքը, պատերազմական նախարարութիւնը պիտի սահմանէ թէ ի՞նչ կերպով պիտի ծառային :

ՅօԴ. 88. — Երբ պատերազմական վիճակ աեւի ունենայ, օրինազանցութեամբ ամբաստանուած ու զատապարտուածները, յանցանքի մը համար ամբաստանուածները և մէկ տարուան և անկէ պակաս դատապարատուածներն իսկոյն զէնքի տակ կ'առնուին, արձակուելէ ետքը դատուելու կամ իրենց պատիմը լրտ-

ցնելու պայմանով : Ատոնցմէ երբ բարւոք ծառայութիւն մատուցանողներ գտնուին , անոնց սպատմին մնացած մասը ներելու կրնայ ձեռնարկուիլ , անհատական իրաւանց չվնասելու պայմանով :

ԱՐՑՈՆՈՒԱԾ ԻՀԹԻՑԱԾ ԷՒ ՄՈՒՄԹԱՀՅԼԶՆԵՐՈՒ  
Ք Ն Շ Ո Ւ Թ Ի Ւ Բ

ՅՈՒ. 89.— Զինուորագրութեան ճիւղին սպաները , Պատերազմական նախարարութեան կողմէ որոշակելիք ատենները , տարին երկու անգամ քննութիւնները կը կատարեն կրծատեալ պայմանաժամով ծառայողներու և կամ ուրիշ եղանակով արտօնուածներու և իհմիամի ու մուսթահֆըզի կարգը գտնուողներու մասսին : Քննութիւնները կը կատարեն կրծատեալ պայմանաժամով ծառայողներու և կամ ուրիշ եղանակով արտօնուածներու և իհմիամի ու Մուսթահֆըզի կարգը գտնուողներու մասսին : Քննութիւնն կատարող սպաները , զինուորական ճամփու ծախքի օրէնքին համաձայն , ճամփու ծախք և օրական կ'ստանան : Քննութիւնն գործողութիւնները հետեւեալներն են .— Ա . մեռնողներու մահուան թուականն ստուգել և մարդահամարի պաշտօնեաներուն հետ բանակցելով մեռնողներու արձանագրութիւնը ջնջել : Բ . Զինուորագրութեան նախագահին տեղեկութիւնն կը տրուի քըննելու համար , բոլոր անոնք որ կը յայտարարեն թէ զինուորական ծառայութիւն չկարենալ կատարելու չափանկարող են : Գ . Զինուորական արձանագրութենէ խոյս առւածները երեւան հսնել և զինուորագրութենէ մը-

նացածներուն հետ (պաքանա) ձերբակալել . նաև աշնոնց արձանագրութեան գործողութիւններն ապահովել : Դ . Զատել անոնք որ պատերազմական վիճակի , մարզանքի և ռազմափորձերուն ատեն ըստ օրինի պիտի չկրնան զէնքի տակ առնուիլ : Ե . Օդափոխութեան գայած զինուորներուն պայմանաժամին նկատմամբ քննութիւն կատարելով առողջացածներուն իրենց շըրջանակները զրկուիլն ապահովել և տակաւին չառողջացածները ամէնէն մօար գանուած առողջապահական մարմինն զրկել քննուելու համար : Իսկ երթալու անկարող եղողներուն մասին աեղեկութիւն հաղորդել զինուորագրութեան ձիւղին նախագահին . նաև միջոցներ ձեռք առնել , որպէս զի արտօնուած զինուորները չանցընեն իրենց արտօնութեան պայմանաժամը : Այս կերպով կատարուած քննութեանց արդիւնքը և զինուորական իշխանութեան պէտք ունեցած աեղեկութիւնները զինուորացուներէն և բացակայութեան պարագային անոնց ազգականներէն առնուելէ ևտքը կը նշանակէն զինուորացուներու արձանագրութեան մէջ : Քննութեանց ատեն պատերազմի պատրաստութեան վերաբերող ուրիշ պարագանութիւններ ալ կ'կատաքուին :

Յ0Դ . 90 . — Քննութեանց աւարտումով ձեռք բերած արդիւնքը ամփոփի կերպով կ'արձանագրուի զինուորագրութեան ձիւղին նախագահին կողմէ պատրաստուելիք զինուորական ընդհ . ոյժի ցուցակին մէջ և կը զրկուի զօրաբաժիններուն : Այս վերջինները կը դրկեն զօրաբանակներուն և զօրաբանակներն ալ Պատերազմական նախարարութեան :

Յ0Դ . 91 . — Հետեւեալներն երբ ինթիյաթի ու Մուսթահնքը կարդիրուն պատկանին , իրենց պաշտօ-

նին տեւողութեանը միջոցին զէնքի տակ առնուելէ զերծ են պատերազմական վիճակի, մարզանքի և սազմափորձերուն համար, — Նախարարները, խորհրդականները, երեսփոխաններն ու ծերակուտականները, Երեսփ, Ժողովի ու Ծերակոյտի Ա., քարտուղարները, ընդհ. հիւպատոսները, հիւպատոսները, փոխ-հիւպատոսները, կուսակալներն ու կառավարիչները, Ֆէթվակմինին, Մէճիսը Թէագիզաթը Շէրիէի նախադանը, Տէրս Վէքիլին, Գատընները, Միւֆթինները, նուիրական վայրերուն պաշտօնեանները և Վեհափառ Սուլթանին նուիրական անձին ծառայողները: Անոնք որոնց համար կը հաստատուի թէ հիւանդկախ րլլալով անկարող են զինուորական ծառայութիւնն կատարել, նաև ոչ-իսլամ հասարակութեանց Պատրիարքները, Կաթողիկոս, Խախամ Պաշի, մետրապոլիտ, Արքեպոս., Ծայր. Վարդապետ, վարդապետ, աւագ խախամներ, վանքերու վանահայրներ, կրօնական ծառայութեան մէջ զանուող քահանաներ, խախամներ, վանքերը բնակող վարդապետներ ու աբեղաններ, բողոքական, լատին ու հրէական Գարափ հաստակութեանց պետեր, որոշ եկեղեցիներու բողոքական յարովիչներ և ցուցակի մը համաձայն անուններն ու թիւն որոշուած տիազոններ և ոչ-իսլամ մէւս կրօնակերուն մէջ ատոնց համապատասխան աստիճան ունեցողները:

Յ0Դ. 92. — Հետեւեալներն երբ Ի՞նթիյաթի ու Մուսթահըզի կարգերուն պատկանին, ցորչափ ահեւէ իրենց պաշտօնը, միայն պատերազմի վիճակի համար ըլլալիք հաւաքումներու առթիւ զերծ են զէնքի տակ կոչուելէ:

Հեռազրական ու թղթատարական և հեռաձայնի

նախարարութիւն . — Հեռագրական մասնագէտ քննիչ-ները , թղթատարական ու հեռագրական կայաններու տնօրէնները , հեռագրող պաշտօննեաները , երաշխառութիւն տալու պարասոր ընդհ . տնօրէնութեանց արկղակալները , մանտա-բօսթի ու քոլի-բօսթալի և անոնց նման գործողութեանց պաշտօննեաները , երաշխառութիւն տուած պահեստի պաշտօննեաները , հեռագրական գործարաններու մէջ աշխատող մասնագէտները , ընդհ . սնօրէնութեանց մեքենագործները , սուրճան-դակներն ու թղթատարական շրջուն պաշտօննեաներն և հեռագրական թելերու պահապան պաշտօննեաները :

Ներքին գործոց նախարարութիւն . — Գայմագամ-ներն ու գիւղախումբի միւտիրները , սստիկանութեան տնօրէններն ու զոմիսէրներ , ասոնց օգնականներն ու սստիկանները :

Պատերազմական ու ծովային նախարարութիւններ . — Պատերազմական պաշտօնարանին գիւտաններուն և զինուորական հիւտանդանոցներու և վարչութեանց քարտուղարներէն անոնք որ բանակին մէջ պիտի ծառային . նաև ածուխի հանքերու մնայուն գործաւորնւրէն անոնք որոնց համար ընկերութեան հետ բանակցուելով հաստատուի թէ երբ զէնքի տակ առնուին , ածուխի արտածումը պիտի վլասուի : Ասոնց անունները պիտի արձանագրուին :

Ելմտական նախարարութիւն . — Տէրութեան հասոյթներն ուղղակի գանձելու և ծախսելու պաշտօն ունեցողները :

Նահանգները . — Տէֆթէրտարները , հաշուակալները , հաշուակալութեան միւմէյիզները , տուրքի միւմէյիզները , հաշուակալութեան Ա. քարտուղարները , գաւառներու տուրքի Ա. քարտուղարները , մալ միւտիրներն ու օգնականները , գանձման պաշտօններն ու օգնականները և գանձապան քարտուղարներ , հաւաքիչներ , արկղակալներ ու ասոնց օգնականներն և

Նահանգներու, գաւառներու և գաւառակներու թարուի քարտուղարները :

Երկրագործական Պանքա .— Բնդհ . Տնօրէնը , կեդրոնին հաշուակալն ու արկղակալն և ճիւղերու պաշտօնիաներն ու արկղակալները :

Հանր . Պարագի թողեալ հասոյթներու վարչութիւն .— Բնդհ . տնօրէնները , հաշուակալութեան ու տառանորդի Ա . օգնականները , թէղքէրէի քարտուղարները , թղթակցութեանց քարտուղարները , վարչական հաւաքիչները , հանր . շնութեանց նախարարութեան հաւաքիչները , երկաթուղիններու ընդհ . տնօրէնութեան պաշտօննեանները , նաւահանգիստներու և քարափներու քօմիսէրները , երկաթուղիններու հասոյթի քարտուղարները և էֆզաֆի նախարարութեան քարտուղարները :

Նուիրական գերեզմաններու պահապաններէն միայն մէկը (ամենէն տարիքուար պիախ թողուի) , խրաքանչիւր մզկիթէ՝ Պէրաթ ունեցողներէն միայն մէյմէկ իմամ , խաթիպ , միւէզզին ու զբերմ . խլ Պէրաթ չունեցողներէն գործնական պաշտօն ունեցող մէյմէկ իմամ (եթէ բազմաթիւ ըլլան , ամենէն տարիքուար պիտի թողուի) :

ՅՈՒ . 93.— Հետեւեալները եթէ ինթիյաթներու և Մուսթահքըններու կարգերուն պատկանին , միայն մարդանքի համար տեղի ունենալիք հաւաքութիւններու ասեն զէնքի տակ կոչուելէ զերծ են.

Երկաթուղիի լնկերութիւններ .— Տնօրէնութեան ու քննչութեան ճիւղերուն պաշտօննեաններն ու գիւաններու քարտուղարները , հաշուակալութեան ու մթերանոցին պաշտօննեաններն ու քարտուղարները , երթեւեկի կեզր . պաշտօննեան , կայարանի պաշտօննեանները , օգնականներն ու աքցանողները (մագանձր) , կառախումբի պետերն ու օգնականները , կարտ-ֆրէնները , կուախումբերը բանեցնելու ճիւղին պաշտօննեաններ ու քարտուղարները , մեքենավարները , հնոցպան-

ները, ջուրի պաշտօնեաները, զործարաններու մէջ ծառայողները, ճամբու ճարսարագէտները, տեւականնորոգութեանց պաշտօնեաները և ճամբու պահապանները:

Յ0Դ. 94. — Երբ աէրութեան բոլոր պաշտօնեաներէն մարդանքի կամ ուազմափորձի համար հարկ ըլլայ մէկ դիւանի կամ վարչական ճիղի պատկանողներուն կէսէն աւելին զէնքի տակ կոչել, միայն կէսը վիճակարկութեամբ կ'առնուի: Կէսէն աւելի մնալիք ներուն կոչն երկրորդ շրջանի մը պիտի թողուի:

Յ0Դ. 95. — Պատերազմական ու Ծովային նախարարներուն անկ է հանրային ու մամնաւոր հիւանդանոցներու և Կարմիր Մահիկի պաշտօնեաններէն ու սպասաւորներէն, զինուորական գործարաններու և հաստատութեանց վարպետներէն, բանուորներէն և երկաթուղիի գործաւորներէն պէտք եղած չափին, փուապաններուն, օսմ. շոգենաւային ընկերութեանց ու ծառայողներուն և ծովային ու ցամաքային փոխադրութեան միջոցներու ծառայողներուն զինուորութիւնն ի հարկին յետաձգել կամ զինուորի հագուստով իրենց տեղը և կամ յարմար դատուելիք վայրերը ծառայեցնել:

## ԶԻՆՈՒՈՐՑՈՒՆԵՐՈՒ ՈՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Յ0Դ. 96. — Ամէն արու անհատ երբ իր նահանգէն դուրս աեղ մը ուղեւորի, իր Օսմանիէ թէղքէրէսին պէտք է հետը ունենայ ուղեւորութեան միջոցին. իսկ բոլոր զինուորցուները՝ Օսմանիէ թէղքէրէններու հետ իրենց աղջտաները, զորս պարտաւոր են ներկայացնել երբ կարգապահութեան պաշտօնեաններուն կողմէ պահանջուի: Ռատիկանները, պատրաստուելիք հրահանգի մը համաձայն, պէտք եղածն ի գործ պիտի դնեն անոնց նկատմամբ որ զինուորական ծառայութիւնը չեն կատարած, կամ իրենց աղջտանը հետերնին չեն առած

և կամ մարդանամարի տումարներու մէջ արձանաւգրուած չեն :

Յօդ. 97. — Մուսթահֆըզներէն զատ անոնք որ պինուորական ծառայութեան շրջանակին մէջ են և իրենց գաւառակէն գուրս տեղ մը պիտի ուղեւորին, երբ իրենց երթալիք տեղը տամնընդնդ օրէն աւելի մնան, իրենց գտնուած տեղը բերանացի կամ զրաւոր պէտք է իմաց տան՝ օտար երկիրներու մէջ ամէնէն մօտ դանուող օսմ. հիւպատոսին, Ափր. Տրիպոլսոյ մէջ՝ կայս. նուիրակին, Եգիպտոսի մէջ՝ օսմ. գօմիսէրութեան, Կիպրոսի մէջ՝ Պէրութի կուսակալին և օսմ. միւս երկիրներու մէջ՝ զինուորագրութեան ճիւղերուն և զինուորագրութեան կազմակերպութիւն չփանուած տեղն ալ քաղաքային ամէնէն մհծ պաշտօնեաներուն։ Երբ բնակավայրնին փոխեն, նորէն տեղեկութիւն պէտք է հաղորդեն :

Յօդ. 98. — Թիւ քաշած զինուորցու մր մինչեւ իր առաքման թուականը զինուորագրութեան ճիւղին չըրջանակէն դուրս չի կրնար ելլել :

Յօդ. 99. — Զինուորագրութեան ճիւղերու նախագահները տեղացի չեղսղ զինուորցուի մը ըննութիւնն և ի հարկին կոչի ու զէնքի տակ առնուելու զրծողութիւնները կը կատարեն բնիկներու համար հղածին պէս։ Տեղայի չեղսղ զինուորցուին առաքման ծախքը զինուորական իշխանութեան կողմէ կ'ըլլայ։ Օսմ. հիւպատոսները զինուորցուներուն զէնքի տակ կոչուելու հրաւերը կը հազարդեն և անոնք իրենց ծննդավայրերը զրկելաւ առթիւ յանձնումի միջոցները կը գործադրեն կարելի եղածին չափ։

Յօդ. 100. — Իւրաքանչիւր թաղ կամ զիւղ պարտաւոր են իրենց զինուորագրութեան ճիւղին հաղորդել պէտք եղած տեղեկութիւնները։

Յօդ. 101. — Զօրաշարժի ատեն զինուորական իշխանութիւնը կրնայ վերոգրեալ տրամադրութիւններէն զատ անհրաժեշտ միջոցները ձեռք առնել :

## ՊԱՏՔԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԻՆՆԵՐ

Յօդ. 102. — Երբ Մարտի սկիզբը տասնեռութ տարին լրացուցած զինուորցու մը մինչև նոյն տարուան Հոկտ.ի վերջը այս օրէնքին համաձայն իր անունը անձամբ կամ ուրիշ միջոցաւ արձանագրել չտայ նախական քննութեան տոմարին մէջ, օսմ. մէկ քառորդ ոսկիէն երեք ոսկիի տուգանքի կ'ենթարկուի. իսկ մինչև վերջնական քննութիւնը չարձանագրուողներէն ատոր կրկին քանակութեամբը տուգանք կ'գանձուի: Ցուցանքը ուղղակի զինուորցուէն կ'ամուսի և եթէ վճարելու պիճակի մէջ չէ, հօրմէն կ'գանձուի:

Յօդ. 103. — Երբ արձակուած զինուոր մը, 80րդ. յօդուածին համաձայն, մինչև երկու տմիս ալզտանն արձանագրել չտայ, օսմ. մէկ քառորդ ոսկիէն երեք ոսկի տուգանքի կ'ենթարկուի:

Յօդ. 104. — Երբ զինուորցու մը իր գացած աեղը, 97րդ. յօդուածին համաձայն, մինչև տասնեհինգ օր իմաց չտայ, օսմ. մէկ քառորդ ոսկիէն մէկ ոսկի տուգանքի կ'ենթարկուի: Այդ միջոցին եղած հրաւէրին եթէ չպատասխանէ, հրաւէրին անսասաողներուն համար սահմանուած պատիժին կ'ենթարկուի:

Յօդ. 105. — Անոնք որ զինուորագրութեան ալզտան չունեցող զինուորցուներն ամի՞ն աեսակ պաշտօնական ծառացութեան մէջ կ'ընդունին. մէկէն տասնըհինգ ոսկի տուգանքի կ'ենթարկուին. իսկ անհատական ծառացութեանց մէջ ընդունողները՝ կէսէն հինգ ոսկի տուգանք:

Յօդ. 106. — Որ ևէ զինուորցու երբ նախնական քննութեան տոմարին մէջ իր անունը արձանագրել չտայ և վերջնական քննութեան ատեն զինուորագրութեան ժողովին չներկայանալ և կամ օրինաւոր պատճառը չզեկուցանէ: մինչև 35 աարիքը լրացնելը՝ ձեռք անցուած թուականէն սկսեալ իր տարեկիցներուն տոմարին մէջ արձանագրութեանը քոլ ծանօթութիւն մը

կը զբուի, արզանը կը տրուի և դիմուորագրութեան ժողովին, և անոր չդումարուած միջոցին. Իտարէի ժողովին կողմէ առանց վիճակարկութեան զինուոր կ'առնուի: Այս կարգիները երեք տարի շինութեանց մէջ կը ծառայեն և երկու տարի ալ զինուորական շրջանակի մը մէջ: Միայն թէ երեք տարին չաւտրաած երբ նոր զինուորներուն առաջման ժամանակը գայ. առանց նկատի առնելու շինութեանց մէջ ծառայելու ժամանակամիջոցին աւարառումը. նոր զինուորներու հետ զինուորական շրջանակը կը դրկուի: Ծառայութեանէն ետքը / ու տարեկիցներուն դանուած զինուորական կարգը կը փսխադրուի: Զինուորագրութեան ժողովին կամ քննիչ մարմինն բժիշկներուն և կամ եթէ իրենց պաշտօնը աւարառած ըլլան, զօրաբաժիններու բժշկական մարմիններու կողմէ երբ վաւերացուի թէ վերը յիշուած զինուորցաւներուն մէջ իրենց Փիզիքական վիճակին բերմամբ զինուորական ծառայութիւն ժատուցանելու անկարողներ կան, տեղոյն իտարէի ժողովին կողմէ անոնց զրամական կարողութեանց համաձայն հինգէն հարիւր սովի տուգանքը կը սահ նանուի, որով նոյն տուգանքը վճարելով և քսան տարի զինուորական տուրքի ենթարկուելու պայմանով զինուորական ծառայութեանէ կ'արձակուին: ՅՅ տարիքէն ետքը ձեռք անցուածները, եթէ զինուորական ծառայութիւն կատարելու կարող ալ ըլլան, զէնքի տոկ չեն առնուիր, այլ միայն հինգ տարի շինութեանց մէջ կը ծառայեն. Նաև իրենց զինուորական ծառայութեան միացած մասին համար ալ զինուորական տուրքի կ'հնդիտարկուին:

ՅՅ. 107. — Ասոնք որ 20 տարին լրացուցած են և ինքինքնին արձանագրել չեն տուած մարզոհամարի տումարներուն մէջ, իտարէի ժողովներուն մէջ սահմանուելիք տարիքին համաձայն, իրենց տարեկիցներուն տումարին մէջ կ'արձանագրուին և ձրզանեներնին կը տրուի. յետոյ 106րդ. յօդուածին տրամադրութիւնները կ'գործադրուին անոնց մասին:

Յօդ. 108. — Անոնք որ զինուորական ծառայութեանէն բոլորովին կամ մասա՞ր աղատելու նպաաակով ինքինքնին խեղանդամ կ'ընեն և կամ ընել կուտան , Զինուորական Պատմական Օրէնքին արամադրութեանց ննթարկուելէ դատ , 106րդ. յօդուածին արամադրութիւններն ալ ի գործ կը դրուին անոնց մասին :

Յօդ. 109. — Այն զինուորոցուն՝ որ նախնական քննութեան առմարին մէջ ինքինքն արձանագրել տուած է , բայց վերջնական քննութեան չի ներկայանար և կամ 26րդ. յօդուածին համաձայն ըստ կանոնի իր օրինական արգելիչ պատճառը հաստատող վաւերացեալ իւլմուխասպէր կամ վկայագիր չի դրկեր . եթէ մինչեւ իր ասրեկիցներուն ասաքումը ներկայանայ և կամ ձիոք անցնի , ասանց վիճակարկութեան զինուոր կ'ըլլայ և իր ասրեկիցներուն հետ զէնքի տակ կոչուելով կը դրկուի . նաև մէկէն հինգ ոսկի տուգանքի կ'ենթարկուի : Ասոնց մէջ եթէ զինուորական ծառայութիւն կատարելու անկարողներ գտնուին , միայն տուգանք կ'առնուի ու զինուորական տուրքի հնթակայ կ'ըլլան : Անոնք որ իրենց ընկերներուն առաքումէն նառքը ամէն կերպով ձեռք կ'անցնին , 106րդ. յօդուածին արամադրութեանց կ'ենթարկուին :

Յօդ. 110. — Այն զինուորոցուները որոնց վիճակը ելած և կամ առանց վիճակարկութեան զինուոր ելած են , երբ իրենց ընկերներուն առաքման միջոցին օրինական հրաւերին անձամբ չեն պատասխաներ և երբ իրենց բացակայութիւնը 64րդ. յօդուածին համաձայն օրինական արդելքի մը արդիւնք եղած չըլլայ , և կամ երբ առաքման միջոցին փախչին , եթէ մինչեւ մէկ տամիս ներկայանան և կամ եթէ ձերբակալուին , իրենց պատկանած դին . շրջանակին մէջ կարգապահութեան պատիմներու կ'ենթարկուին : Եթէ մինչեւ երեք ամիս ներկայանալով և կամ ձերբակալուելով դրկուին , մինչեւ յաջորդ տարուան նոր զինուորներուն առաքումը շինութեանց մէջ կ'աշխատին . յետոյ իրենց կար-

զին համաձայն զինուորական գործօն ծառայութիւնը ամբողջովին կ'կատարեն : Երբք ամիսը անցնելէն ետքը չներկայացողներն երբ ձեռք անձուին 106րդ յօդուածին տրամադրութեանց կ'ենթարկուին : Արտօնուած զինուորցու մը երբ զէնքի ատկ կոչուի և առանց օրինական պատճառի չներկայանայ , և երբ մինչեւ մէկ ամիս ներկայանայ կամ ձերբակալուի , իր շրջանակին մէջ կարգապահական պատիժներու կ'ենթարկուի մէկ ամիսը անցնելէ ետքը չներկայացողները երբ ձերբակալուին և կամ ներկայանան , իրենց ընկերներուն չափ զինուորական շրջանակներու մէջ ծառայելէ ետքը , առոր կրկին չափովը չինութեանց կր ծառայեն :

Յ0Դ. 111. — Երբ զինուորցու մը վերջին քննութեան ատեն իրեն տեղ ուրիշ մը դրկէ , կամ վիճակարկութենէն ետքը իր զինուորական ծառայութիւնը կատարելու համար իրեն տեղ ուրիշը դրկէ , կամ իր զինուորական գործողութեանց մէջ կեղծ վկայական ու գրութիւններ գործածէ և կամ զինուորութենէ բոլորպին կամ մասամբ ազատելու նպաստակով ու և է կերպով խարդախութիւն մը կ'ընէ , 106րդ յօդուածին տրամադրութեանցը կ'ենթարկուի : Այդ արարքներուն համար թէ՛ զինուորցուն և թէ օժանդակները կամ ընկերները ատկէ զատ կ'ենթարկուին նաև պատճական օրէնքին տրամադրութեանցը :

Յ0Դ. 112. — Զինուորադրութեան վերաբերող տումարներուն մէջ երբ ճշմարտութեան հակառակող բան մը գրուի և երբ հաստատուի թէ անհոգութեան ու անուշադրութեան հետեւանք է , պատասխանատուն մէկէն հինգ օսմ . ոսկի տուգանքի կը դատապարտուի . երբ դիտմամբ եղած է , կեղծարարութիւն կը նկատուի և պատասխանատուն և կամ գործակիցները օրինական հետապնդումի կ'ենթարկուին :

Յ0Դ. 113. — Զինուորցուներու մասին ճշմարտութեան հակառակ տեղեկութիւն տուղղական տուղղական ընողները ու յայտարարութիւն ընողները և վաւերագիր տուղղական ընողները օրինական պատիժին կ'ենթարկուին :

Յ0Դ. 114. — Զինուորական պաշտօնեայ մը երբ 62րդ յօդուուածին տրամադրած ցուցակին չարձանագրէ անունն այն զինուորցուին զոր պէտք էր արձանագրել, Զինուորական Պատժ. Օրէնքին համաձայն կը պատճուի:

Յ0Դ. 115. — Կարգապահութեան պաշտօնեաները կը ձերբակալին և ահղական կառավարութեան կը յանձնեն անոնք որ ուղեւորութեան ատեն Թօրդ յօդուածին համաձայն, օսմանիէ թէզքէրէսին ցոյց չեն կրնար տալ. նաև մուսթահնքրդներէն զատ այն զինուորները որ վերսպեալ յօդուածին համաձայն իրենց օսմանիէ թէզքէրէսին կամ նրգւանը չեն կրնար ցոյց տալ: Սնոնք երբ այս օրէնքին միւս յօդուածներուն համաձայն աւելի ծանր պատի ժարամագրող արարք մը չեն ունիցած. մէկ քառորդ օսմ. ոսկիէն երեք ոսկի տուգանքի կ'ենթարկուին և կամ 24 ժամէն մինչեւ մէկ ամիս կը բանտարկուին: Երբ անոնք զինուորցու րլան, տեղական կառավարութեան միջոցաւ կը յանձնուին ձերբակալուած վայրին զինուորագրութեան ձիւղին:

Յ0Դ. 116. — Այս դրուխին մէջ նշանակուած աւրաքներէն՝ բանտարկութիւն, բերգարգելութիւն ու թիապարտութիւն և 106րդ յօդուածին տրամադրած դրամական տուգանքներն ու նախորդ յօդուածով նըշանակուած պատիժներն առաջ բերաղ արարքներուն դատերը կը տեսնուին, իրենց իրաւասութեանց համաձայն, զինուորական ատեաններու և կամ պատժական հանր, գատարաններու կողմէ. ասոնցմէ զատ եղածներն ալ զինուորագրութեան ժողովներու և եթէ այս ժողովը գումարուած է՝ իտարեկի ժողովին մէջ:

Յ0Դ. 117. — Զինուորագրութեան ժողովներու և իտարեկի ժողովներուն կողմէ վճռուելիք դրամական առողջանքներն հատուցանել չու զողներ երբ զանուին, իտարեկի ժողովին կողմէ պատրաստուելիք տեղեկագիրը, տեղուոյն քաղաքական ամէնէն մէծ պաշտօնեային ծանօթագրութեամբը, դատական նախարարու-

թեան ընդհանուր պատասխանին կը հաղորդուի , որպէսզի դրամական տուգանքի պատիժը բանտարկութեան փոխառով ըստ այնմ գործադրուի :

### ԴՐԱՄԱԿԱՆ “ՊԵՏԷԼ”

Յ07. 118. — Զինուորական գործօն ծառայութեան փոխարէն պէտէլն յիսուն օսմ . ոսկի է :

Յ07. 119. — Այս պէտէլը զոր զինուորցուն և կամ անոր անունով արիշը պիտի առաջ . Օսմ . երկիրուներու մէջ ստացագիրի փոխարէն կը վճարուի պետական արկղերուն , եղիպասի ոչչ Օսմ . Փոմիսէրութեան . Ափր . Տրիտոնոյ մէջ կայս . նուիրակութեան և օտար երկիրներու մէջ դեսպանատանց և հիւպատոսարաններուն :

Յ07. 120. — Ի՞նչո՞ւ նշանակուած է 110րդ յոդուածին մէջ , իրենց ընկերներուն առաքմանը պահուն եղած հրաւերին չպատասխանելով և կամ ստաքման միջոցին փախչելով ամիս մը հաքք ձեռք անցուելիք զինուորցուներէն և 106րդ յոդուածին արամադրութեանցը ևնթականներէն պէտէլ չընդունուիր : Հետեւաքար պէտէլ ընդունելու համար պէտէլ է դինուորագրութեան ձիւղերէն վաւերագիր մը ներկայացնել թէ զինուորցուին պէտէլն ընդունելու համար վերը յիշուած յօդուածին համաձայն արգելք մը չկայ :

Յ07. 121. — Զինուորցու մը երբ պէտէլ վճարած ըլլալը հաստատող ստացագիր ցոյց առաջ և կտր եթէ պէտէլին վճարուած ըլլալը պաշտօնագէս ծանուցուի , իր գանուած տեղին ամէնէն մօտիկ հետեւակ զօրքերու շրջանակի մը մէջ վեց ամիս կը ծառայէ . յիսոյ առանց հրահանգ խնդրուելու կ'արձակուի , և իր տարեկիցներուն հետ ինթիյամի կարդր կը փոխագրուի . նաև զէնքի տակ գանուելու ժամանակամիջոցին մէջ նորէն գրօշի տակ չի հրաւիրուիր , բաց ի իր պատկանած զօրաբանակին ընդհ . զօրաշարժէն : Այս կարգին ներն իրենց արտօնուած ժամանակամիջոցին համար

իրենց պատկանած զօրաբանակին ընդհանուր զօրուշարժի պարագայէն զատ ուրիշ և ոչ մէկ պատճառով ու եղանակով զէնքի տակ չեն առնուիր :

Յ0Դ. 122. — Զօրաշարժի հոչակման թուական՛ն սկսեալ պէտէլ չընդունուիր մինչեւ խաղաղութեան ատենի վերագրաբեց :

Յ0Դ. 123. — Զինուորական շրջանակներու մէջ ծառայողներէն պէտէլ տալ ուղղողներն եթէ հետեւակ, ամրաշէն ու ոստիկան-զինուորներու կարգերուն կը պատկանին, իրենց մաւաքի թուականէն ոկտեալ վեց ամսաւան ծառայութենի, ետքը կ'արձակուին : Եթէ ցամաքային զօրքերու միւս կարգերուն կը պատկանին և երբ զինուորական ծառայութիւնը մէկ տարի կատարած չեն, օմէնէն մօսիկ հետեւակներու շրջանակը փոխազրուելով, հոն նորէն վեց ամիս մարզանք կը կատարեն . յետոյ իրենց տարիքին համաձայն արտօնուած զօրքերու կամ իհթիյաթներու կարգերը կը փոխազրուին . եթէ նաւային զինուոր են և երեք տարուան շրջանն աւարտելէ առաջ պէտէլ տան, հետեւակներու շրջանակի մէջ վեց տմիս մարզանք կրնեն և յետոյ իրենց տարիքին համաձայն, արտօնուած զօրքերու կամ իհթիյաթներու կարգը կը փոխազրուին : Զանազան ծառայութեանց, արտօնուած րդալու շրջանին, օգափոխութեան, փախուստի և բանատրկութեան ժամանակամիջոցներն իրեւ մարզանքի ծառայութեան ժամանակամիջոց չեն նկատուիր :

Յ0Դ. 124. — Իհթիյաթներէն ու Մուսթահքըներէն պէտէլ չընդունուիր :

Յ0Դ. 125. — Պէտէլ տուողները եթէ պետական պաշտօնեայ են, արձակուրդ ստացած կը նկատուին որքան աեւէ իրենց մարզանքի շրջանը :

Յ0Դ. 126. — Զէնքի տակ ծառայողներէն զատ ուրիշներ երբ թէ՛ օսմ. երկիրներու մէջ և թէ օսարերկիր զանուելով պէտէլ տան, ատօնց մարզանքը Հոկտ փն կ'սկսի : Ատօնք եթէ փափաքին՝ մարզանքի

շրջանը կը յետաձգուի յաջորդ տարին՝ նոյն տարին  
ներկայանալու պայմանով : Եթէ յաջորդ տարի առանց  
օրինաւոր պատճառի չներկայանան, մարզանքի շրջանը  
կը կրկնապատկուի : Եթէ երկու տարի առանց օրինա-  
ւոր պատճառի մարզանքի չներկայանան, երկու տար-  
ուան դորձնական ծառայութեան կ'ենթարկուին եւ  
իրենց պիտի չի վերադարձուիր :

Յ0Դ. 127. — Հետեւեագ պարագաներն երբ ստու-  
գուին, պիտի վճարած զինուորցուին պիտի կը վե-  
րագրածուի .— Ա. Զէնքի տակ կամ օդափոխութեան  
մէջ մնանի և կամ այն առաջնան հիւանդկախ վիճակի  
մը ենթարկուիլ որով հարկ բլլայ զինուորական աս-  
պարէղն դուրս հանել : Բ. Երբ մարզանք կատարող  
մը մարզանքի որոշեալ պայմանաժամն աւարտէ և  
սակայն հարկեցուցիչ պատճառներով չկրնայ արձակ-  
ուիլ (այդ տեսակներուն զէնքի տակ մնալու ժամա-  
նակամիջոցը լրացնել կը տրուի) : Գ. Երբ պիտի վճա-  
րողի մը մարզանքը յաջորդ տարուան մնացողներէն  
զինուորցու մը մեռնի՝ պիտի վճարելու թուականէն  
վեց ամիս չանցած, և կամ եթէ հաստատուի թէ զին-  
ուորական ասպարէղն դուրս հանուելու աստիճան հիւ-  
ւանդկախ է : Դ. Երբ պիտի վճարուած թուականէն  
սկսեալ վեց ամիս չանցած զէնքի տակ ասնուին զօ-  
րաշարժի հրատարակութեան հետեւանքով (այս կար-  
դիններուն զէնքի տակ մնալու ժամանակամիջոցը լրա-  
ցնել կը տրուի) :

Յ0Դ. 128. — Պիտի վերադարձուիլ երբ զին-  
ուորին կամ անոր ժամանգորդներուն կողմէ պահանջ-  
ուի, զօրաբանակը իր զինուորներուն համար մէկ ամ-  
սուան և ուրիշ բանակներու պատկանողներուն համար  
ալ երեք ամսուան մէջ քննութիւն կը կատարէ, յետոյ  
երմասական նախարարութեան կը տեղեկագրուի և տե-  
ղեկագրուելու թուականէն սկսեալ մէկ ամիս պիտի կը  
վերադարձուի :

Յ0Դ. 129ի.— Պետէլ տուողներէն անոնք որ զինուորագրութեան գործողութեանց բերմամբ իրենց պատկանած զօրաբանակին մէջ մարդանք կատարած են, իրենց տեղերը վերադառնալու ծախքը իրենց կը վերաբերի, իսկ զօրաբանակին չրջանակէն դուրս մարդանք ունեցողներու վերադարձի ծախքը զինուորական իշխանութեանց կողմէ կը հատուցուի :

Յ0Դ. 130 .— Պետէլ տուողներուն ամսաթոշակ, պարէն ու հագուստ կը տրուի մարդանքի չրջանին ատեն :

Յ0Դ. 131 .— Զէնքի տակէն փախչող զինուորներէն Պետէլ չընդունուիր, եթէ տուած են, կը վերադուի :

Յ0Դ. 132 .— Անզէն ծառայութեան մէջ գանուողները և կամ անզէն ծառայութեան սահմանուածները երբ պետէլ տան, մարդանքը անզէն ծառայութեան մէջ կը կատարեն :

## ԶԱՆԱԶԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յ0Դ. 133 .— Խոարէի ժողովներուն մէջ այս օրէնքին համաձայն կատարուելիք գործողութեան տակն զինուորագրութեան ճիւղին նախագահը նոյն ժողովն բուն բնական անդամը կը նկատուի :

Յ0Դ. 134 .— Քսաննեւմէկ տարեկանէն առաջ զէնքի տակ առնուածներն արտօնուած կը նկատուին. արձակման պարագային իրենց տարեկիցներուն հետ պէտք եղած գործողութեանց և զինուորական տուրքին հնմթարկուելու համար :

Յ0Դ. 135 .— Եկած ու զալիք բոլոր զաղթականներն իրենց զաղթելու թուականէն սկսեալ վեց տարի ետքը իրենց տարիքին համաձայն զինուորական գործողութեանց կ'ենթարկուին : Վաչկատուն աշիրէթ-

ներէն անոնք որ բնակութիւն հաստատած են, զինուուրական ծառայութենէ զերծ են:

ՅօԴ. 136.— Օսմ. հպատակ կին մը եթէ պարսիկ հպատակի մը հետ ամուսնացած է, ատոնցմէ ծնածները զինուորական ծառայութիւն ենթակայ են:

ՅօԴ. 137.— Անհատ մը զինուորական գործողութեանց մէջ ամուսնացած նկատուելու համար պէտք է որ իսլամներու մէջ ամուսնական պայմանագրութիւնը (ագտ) կնքուած ըլլայ և ոչ-իսլամներու մէջ ամուսնական բալոր արարողութիւնները կատարուած ըլլան. նաև վերջնական քննութեան ատեն այր ու կին մէկ տան մէջ գտնուին:

ՅօԴ. 138.— Հայր մը կամ այրի մայր մը եթէ երեք և աւելի մանչ զաւակ ունենայ և ատոնց երկուքը զինուորական գործօն ծառայութեան մէջ մեռած ըլլան, այդ հօր կամ այրի մօր զինուորական աարիքին մէջ գտնուած երրորդ կամ մեացած զաւակները կրծատեալ ծառայութեան ենթակայ են: Այս պարագային մէջ օգափիսութեան պահուն մեսնողները զինուորական գործօն ծառայութեան մէջ մեռած կը նկատուին:

ՅօԴ. 139.— Երբ զինուոր մը օգափիսութեան դրկուի և յետոյ առողջանալով իր զինուորական շրջանակը վերագանայ, օգափիսութեան ժամանակամիջոցին միայն մէկ տարին զինուորական գործօն ծառայութիւն կը նկատուի:

ՅօԴ. 140.— Նախնական քննութենէն ետքը տարիքի սրբազրութիւնը զինուորական գործողութեանց մէջ ընդունելի չէ: Զինուորական ժողովներն իրաւասութիւն ունին տարիքի սրբազրութիւնը կատարելու անոնց որոնց անձն ու արձանագրութիւններն անհամապատասխան են:

ՅօԴ. 141.— Զինուորական տեսակէտով նկատի չառնուիր կղերականի հանգամանքը ոչ-իսլամ՝ ազգութեանց պատկանողներէն անոնց որ իրենց զինուորական գործօն ծառայութիւնը չեն կատարած:

ՅօՆ. 142. — Կրօնական ուսանողներու (իոլամ) առաջին չորս տարիներու քննութեանը համար Մէտրէսէներու օրէնքին համաձայն կազմուելիք քննիչներու ժողովներուն ներկայ կը գտնուի նաեւ զօրաբաժիններու հրամատարներուն կողմէ կարգուելիք քննիչը :

ՅօՆ. 143. — Որևէ անհատ կրօնական ուսանող (իոլամ) նկատուելու համար պէտք է հնթակայ ըլլայ Մէտրէսէներու օրէնքին արամազրութեանցը :

### ԱՌԺԱՄԵԱՅ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅօՆ. 144. — Այս օրէնքը, մինչև 1331 Մարտ Պատերազմական նախարարութեան կողմէ մաս մաս կիրարկուելու պայմանով, գործադրելի է հրատարակման թուականէն սկսեալ : Միայն թէ օրէնքին հրատարակման թուականէն առաջ պէտի առողջները կը վայելին նախորդ օրէնքով իրենց ունեցած իրաւունքները : Երբ պահանա զինուոր մը այս օրէնքին հրատարակութեան ատեն զէնքի տակ ըլլայ, նախորդ օրէնքին արամազրութեանցը կ'ենթարկուի : Միայն թէ կ'արձակուին անոնք որ իրեւ պատիժ իրենց կատարոծ զինուորական ծառայութեան մէջ հինգ տարին աւարտած են :

ՅօՆ. 145. — Այս օրէնքին հրատարակութեան թուականէն առաջ պէտի առողջներէն զատ, միւս բոլոր զինուորացուները, քսան տարին աւարակու տարիին յաջորդող Մարտէն հաշուելով, ներկայ օրէնքին տրամադրած զինուորական ծառայութեան ժամանակամիջոցին բաժանմանց համապատասխանող կարգերնու տարիները պիտի փոխադրուին : Զէնքի տակ զընուողներուն փոխադրութեան գործողութիւնն անոնց արձակումէն ետքը անդի կ'ունենայ :

ՅօՆ. 146. — Իոլամ ժաղովուրդէն և Օսմ. զանազան տարրերէն ի վաղուց անտի զինուորական ծառայութենէ ազատ և կամ ուեէ պատճառով զերծ մը-

Նացողներէն անոնք որ 1299 և անկէ ետքի տարիներուն ծնած են, ներկայ օրէնքին հրատարակուելութուականէն սկսելով իրենց տարեկիցներուն կարգերուն մէջ կ'արձանագրուին։ Ասոնցմէ անոնք՝ որոնց համար քննութեամբ հաստատուի թէ ֆիզիքապէս անկարող են զինուորական ծառայութիւնը ընել, ինչպէս նաև 1299 տարիէն առաջ ծնածները մինչեւ որ աւարտեն իրենց 40 տարին, 72րդ յօդուածին համաձայն զինուորական առորքի կ'ենթարկուին։

80Դ. 147. — 1303, 1304, 1305, 1306, 1307, 1308 և 1309 ծնածներէն անոնք որ ուեէ պատ՛առաւ իրենց զինուորական ծառայութիւնն անձամբ կամ պիտի չեն կատեւալ պայմաններն եթէ ունենան զէնքի տակ պիտի առնուին առանց նկատի առնելու մուինիլի կամ մուինիկ ըլլալնին. — Ա. Օմ. Համալսարանին, չերիի գատաւորներու և քարոզիչներու վարժարաններուն, «քատասթրոնի վարժարանին, վարժապետանոցին բարձրագոյն ճիշդին, ելմտական վարժարանին, պետական, մասնաւոր ու օտար վարժարաններու և ուրիշ երկիրներու բարձրագոյն վարժարաններուն մէջ իրենց ուսումն աւարտագները։ Բ. Անոնք որ Սուլթանիէ ու պետական եօթնամեայ իտատիներէն և միեւնոյն ռատիճան ունեցող մասնաւոր ու օտար վարժարաններէն վկայական ուսացած են և անոնք որոնց զինուորական ծառայութիւնը յետաձրգուած է՝ երկու վերջին գտարանները յաձախելնուն համար։ Գ. Կրօնական ուսանողներէ (Խոլամ) անոնք որ զինուորակրութեան նախորդ օրէնքին համաձայն վեցերորդ տարուան քննութիւնը տուած են։ Դ. Անոնք որ ներկայ օրննքը հրատարակուած միջոցին ուսումն առնելու վրայ են Ա. հատուածին մէջ յիշուած պետական, մասնաւոր և օտար բարձրագոյն վարժարաններու մէջ։ Ե. Կրօնական ուսանողներէն (Խոլամ) վեցերորդ տարուան քննութիւնը չտուողները, Մէտրէսէներու օրէնքին համաձայն, այդ քննութիւնը տա-

էն անմիջապէս ետքը : Վերոզրեալներէն Ա. . Բ. . ու Գ. . առուածներուն մէջ նշանանակուածներուն զինուորութեան մէկ տարուան ծառայութիւնը կատարել կը տըրուի 1330 տարուան Սեպտ. ին , Դ. . ու Ե. . հատուածներուն մէջ նշանակուածներունը՝ իրենց ուսումը տարտելէն և կամ Մէտրէսէներու օրէնքին համաձայն վեցերորդ տարուան քննութիւնը տալէն անմիջապէս ետքը : Կրօնական ուսանողներէն (Խոլամ) անոնք որ վարժաբանին մէջ իրենց արձանագրութիւնը չնջուած է և որոշ ժամանակամիջոցին մէջ վեցերորդ տարուան քննութիւնը չեն տուած , երկու տարի զէնքի տակ պիտի ծառայեն : Այս կերպով զէնքի տակ անուելի իրեներն եթէ միեւնոյն վիւանին և կամ վարչական միեւնոյն ճիւղին պաշտօնեայ են և երկու հոգի՝ վիճակով ատոնց Ֆէկը կ'առնուի , եթէ երկուքէն աւելի են ու դոյդ թիւ կը ներկայացնեն՝ ամբողջովին ու եթէ անզոյդ թիւ կը ներկայացնեն՝ մէկէն զատ մնացածներուն կէսը կ'առնուի , միւսներն ալ յաջորդ տարուան կը յետաձգուին :

80Դ. 148. — Նախորդ յօդուածին համաձայն զէնքի տակ անուելի քններէն անոնք որ պաշտօնեայ են , իրենց զինուորութեանը միջոցին իրեւ արձակուրդ ստացած կը նկատուին . նաև իրենց ամսաթոշակներէն իրենց փոխանորդներուն տրուելիք մասէն մնացած միւս մասը ընտանիքներուն կը տրուի , և եթէ չունենան իրենք կը ստանան :

80Դ. 149. — 147րդ յօդուածին մէջ նշանակուած հանգամանքներն ու պայմաններն ունեցողներէն անոնք որ այս օրէնքին հրատարակուած օրն ուսուցչութիւն կ'ընեն , զերծ են զինուորական մէկ տարուան ծառայութենէն :

80Դ. 150. — Նախորդ յօդուածներուն համաձայն զէնքի տակ անուելիք զինուորներն իրենց ստացած ուսման տեսակին և իրենց փիզիքական ընդունակութեանն համեմատ զինուորական զանազան կարգերուն

մէջ պիտի բաժնուին : Սպայութիւնն յատուկ հանգամանքներն ու սպայմաններն ունեցողնեշտ , պահեստի սպաններու օրէնքին համաձայն , պահեստի սպաններու կարգը պիտի դասուին . իսկ նոյն հանգամանքները չունեցողները , իրենց ընդունակութեանն համեմատ , պահեստի ենթասպայ պիտի կրնան կարգուիլ :

ՅՕԴ . 151 . — 147րդ յօդուածին տրամադրած հանդառնքն ունեցողները , զէնքի տակ տանուելու մասին նոյն յօդուածով սահմանուած տարիին մինչև Սեպտեմբերի վերջը պարտաւոր են ներկայանալ իրենց պատկանած զինուորագրութեան ճիւղին կեցրոնը : Անոնք որ հիւանդ ըլլալով չեն կրնար ներկայանալ , պէտք է վաւերագիր մը զրկեն եզիպտոսի մէջ՝ Գօմիսէրութեան , Ափր . Տրիպուսոյ մէջ՝ Կայս . նուիրակին , Օսմ . ուրիշ երկիրներու մէջ՝ իրենց գտնուած տեղին զինուորական ճիւղերուն և օտար երկիրներու մէջ ալ Օսմ . դեսպանատանց և կամ հիւպատոսարաններու կողմէ վաւերացուած :

Զէնքի տակ առնուելու համար անհրաժեշտ եղած տարուան մինչև Սեպտեմբերի վերջը չներկայացողները և կամ վերոյիշեալ վաւերագիրները չզրկողները պահեստի սպայ ըլլալու իրաւունքէն պիտի զրկուին : Անոնք որ որոշեալ ժամանակէն սկսեալ մինչև երկու տարի առանց օրինաւոր պատճառի չներկայանան , երկու տարի իրեւ զինուոր պիտի ծառայեն :

ՅՕԴ . 152 . — Այս օրէնքին արամադրութեանց չը համապատասխանող բոլոր օրէնքները , կանոնագիրներն և հրամանագիրները ջնջուած են :

ՅՕԴ . 153 . — Այս օրէնքին գործադրութիւնը կը պատկանի Նախարարութեան :

Իրատէ կ'ընեմ որ այս օրինագիծը գործադրուի և

Տէրութեան օլէնքներուն վրայ աւելցուի, Ընդհ. Ժողովին բացմանը անոր ներկայացնելու պայմանավ:

17 ձ՛, մազիւլախէր 1332 : 29 Ապրիլ 1330

### ՎԵՆԻՄԵԿ ՔԷՂԱՊ

Պատերազմական նախարար՝ ԷՆՎԵՐ. Շեյխ իւլ Խոլաև  
և Էվգափի նախարար՝ ԽԱՅՐԻ, Եպարքոս և Արտաֆին  
զործոց նախարար՝ ՄԷՀՄԷՏ ՍԱԻՏ. Ելեւետական նախա-  
րար և Ներքին զործոց նախարարի փոխանորդ՝ ՃԱՎԻՏ,  
Մոլային նախարար՝ ԱՀՄԷՏ ՃԵՄՈԼ, Դատական նախա-  
րար՝ ԻՊՐԱՀԻՄ, Կրթական նախարար՝ ԱՀՄԷՏ ՇԻՒՔՐԻ,  
Առեւտրական և Երկրագործական նախարար՝ ՄԻՒԼԵՑՄԱՆ  
ԷԼՊՈՒՍԹԱՆԻ Էֆ., Հանր. Շին. նախարար՝ ԽԱՀՄՈՒՏ,  
Պետական Խորհուրդի նախագահ՝ ԽԱԼԻԼ և Թղթատար-  
կան և Հեռագրական նախարար՝ ՈՍԿՈՆ ՄԱՐՏԻԿԵԱՆ:

### ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ

### ՔԵՇԻՇԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, ՄԱՀՄՈՒՏ ՓԱՇԱ, ՔԻՒՔՔՃԻ ԽԱՆ, ԲԻՒ 32-34

Տպարանիս մէջ կը տպագրուին ամէն տեսակ տպագ-  
րական գործեր՝ մաքուր եւ դիւրամատչելի գիներով, գտ-  
ւառներէն ըլլալիք յանձնաբարութիւնները կը կատարուին  
խիստ խնամքով եւ կատարեալ ճշգրտահութեամբ:

# ՊԱՏՐԱՍՏ ԵՒՐՈՎԱԿԱՆ ՀԳԵՍՏԻ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

## ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱԶԵԱՆ

Ա. Պոլիս, Մրամպուլ, Զաբնաբերլար Խօզուցու, թիւ 23

Վերջին նորաձեւութեամբ կտրուած Եւրոպական  
ամէն չափու վրայ պատրաստ

Բարժիսիններ, ճագէքներ, ժամքեզի ժիշեններ,  
սարասներ, ռոպ տը շանչոր, եւլն., եւլն., եւլն.

Տղայոց մարնել եւ ֆէքէն զօրիւմներ,  
ամառուան Սօթ զօրիւմներ

Ա. Մ Ե Ն Ա. Ը Ն Ց Ի Ր Կ Ե Ր Պ Ա Ս  
ԵՒ

Ա Ն Հ Ա Ի Ա Տ Ա Լ Ի Ա Ժ Ա Ն Գ Ի Ն

## ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ

Մ Ե Ծ Ա Փ Ա Ն Ա Կ Վ Ա Ճ Ա Ռ Ո Ւ Ի Մ

ՀԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՀԱԳՈՒՄՑՆԵՐՈՒ

(Զաբնաբերլար, թիւ 23, եւ Զիւմպիւլիւ իան թիւ 18)

Գարաններէ եղած յանձնարարութիւնն  
արագ եւ խնամքով ի զործ կը դրոին  
ԴԻԴՐԱՍԱՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

# ԼԵՂՈՆ Յ. ՀԱՎԱԼԻՇԵԱՆ ԵՒ ԵՂԲԱՅՐ

## ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՊՐՈՒՍԱՅԻ ՀԱՎԱԼՈՒ ԵՒ ՄԵՑԱՔՍԵՂԵՆՆԵՐՈՒ



Պրուսայի մեր անձնական գործարանին մէջ խընամքով կը պատրաստուին հավլուներ, մետաքսեղէններ, և ամէն տեսակ տեղական ապրանքներ, որքան մրցելի դիներով կը ծախուին թէ Պրուսայի և թէ Պօլսոյ մեր մասնաճիւղերուն մէջ:

Կը խնդրուի յարգելի վաճառականներէ և յաճախորդներէ որ հաճին անգամ մը այցելել մեր վաճառատունը, գաղափոր մը կազմելու համար մեր ապրանաց ազնուութեան և զներու խիստ աժանութեան վրայ:

Հասցէ՝

Կ. Պօլս, Մահմուտ փաշա.

Եարլի խանի կից, թիւ 1—2

Մասնաճիւղ՝

Պրուսա, Կեյլի խան

Մասնաւոր գործարան՝

Պրուսա, Կայաղան, Իբլիֆան խան

ԳԱՒԱՄՆԵՐԵ ԵԳԱԾ ՅԱՆՉՆԱՐԱՐՈՒ Թ. Է Հ. Ր.

Կը կատարուին

ԽԻՍՏ ԱՐԱԳ ԵՒ ԽԱԱՄ ՔԱՋ

# Կ. ԵՒ Լ. ՃԱՄՈՒԶԵԱՆ

(ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՄԱՆԵԱՅԱԹՈՒՐԱՅԻ)

Կ. Պոլիս, Մեհման Փաշա խան, թիւ 50

ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Վըլուր, կապօք, Անգղ. ճերմակեղեններ,  
(խամ, մահուցի) եւ

մամիճաբիշիրի վերաբերեալ ժեսա՛ներու

ԿԱՆԽԻԿ ԵՒ ԱՊԱՌԻԿ

---

# ՍՑԵՓԱՆ Մ. ՏԵՐ ԱՀԱՐՈՒԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՊՐՈՒՍԱՅԻ ԱՊՐԱՆԱՑ

Կ. Պոլիս, Մահմետ փաշա, Գամօնիս խանի տակ թիւ 73

Խավլու թաքըմներ և պուրնուզներ, ձէհեղի համար խնամով պատրաստուած պրօտէ բանուած խավլուներ, մետաքս չարբեր, պլուզի համար մետաքսէ նուրբ կերպամներ, քէֆիէ, քրէփ, ապանի սարըքներ, չարշաֆ, փէշտիմալ և տեղական ամեն տեսակ ապրանքներ:

ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ԿԱՆԽԻԿ ԵՒ ԱՊԱՌԻԿ

ԳԱԻԱՌԻ ՑԱՑԱԽՈՐԴԱՑ ՍԱՍՆԱՌՈՐ ԴԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ

# ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ ՎԱՀՐԱՄ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ Կէտիկ Փաշա, Պալի Փաշա Եօդուշու

Այս գեղարանը որ կարձ ժամանակի մը մէջ հարաբակութեան վստահութեանը արժանացաւ, մասնաւորապէս գեղերու խիստ թարմաւթեան, գեղագիւնեսու չզգրիտ պատրաստութեանը համար, այս անգամ իր բոլոր յաճախորդները զոհ ձգելու նպատակով բերել տուած է իր վոյքիկնական և անուտիան ազգեցիկ զօրութիւնովը հանրածանօթ՝ աէկլիք Մարքայով Միշատապան փոշին, որ աւելորդ կը սեղինք ըսել մլուկներուն ու միջաւաններուն բնաջինջմանը առաջին կարդի գեղն է :

ԿԲ. ԲԱԻԻ. ԱՆԳԱՄ ՄԲ. ՓՈՐՁԵԼ.

## ԳԻՒՆԵՐԸ ԴԻՒՐԱՄԱՏԱԵԼԻ ԵՆ

ԾԱՆՈԹ. — Այս գեղարանը կը յաճախեն փորձ ու կարող բժիշկներ, որոնք հիւանդներ կը նային գեղարանին կից մասնաւոր սենեակի մը մէջ. Չորեքշաբթի, Հինգշաբթի և Ուրբաթ օրերը ձրի կը գարմանեն :

Դեղարանիս բժշկական բոլոր գեղերը զուտ անգլիական և գաղղիական գեղերն են, պատրաստուած գեղագործական արհեստին վերջին մէթոսին համաձայն :

Դեղարանը ունի գիշերային սպաս

## ՏՕՔԹՈՌ ԳԱԶԱԶԵԱՆ

ՄԱՍՆԱԳԵՑ ԲԺԻՇԿ

Ներքին, վիրարուժական և ծննդամիզային եխանդուքեանց

կը զտնոի՝ Պոյիս, Կէտիկ Փաշա, Ալի պէյ եօդուշու և  
Վահրամ Ասատուրեան հք. ի դեղարանը

ԴիիրԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՒ ԱՐԱԳ ԲՈՒԺՈՒՄ

# ՃԱՄԲՈՐԴՈՂՆԵՐՈՒՆ

Լիվրուլ, Հայր, Թրիեստէ, Նախօյի, Մարսիլիա,  
և Փարասի ճամբռով

Ամերիկա, Գանձատա, Պուենոս Այրես, Պուբլիկ, Գուլմածո,  
Կալկարտ, Սպարտալիա, Զինատան ու Ճափօնիա

Գիւնըրտ Լայն, Հուայր Սթար Լայն, Գենեկիլն Փէ.  
սիֆիլ, Փէնինսըլլր Օրիենթըլ, Ճեն. Թրանսարդանիք,  
Թրանսիօր Մարիիիլ, Անգլր Լայն, Ֆապր Լայն և այլ  
Անգլիական, Ֆրանսական և ուրիշ ընկերութեանց ա-  
մենանշանաւոր և խիստ հանգստաւէտ չողենաւերով  
ճամբորդել ու զողները՝ չողենաւի թէ երկաթուղուփի  
տոմսակներ զնելու և այլ մանրամամնութեանց համար  
նախ և առաջ թող դիմեն հետեւեալ հասցէին՝

ՅՈՒՂՅԵՆՆԵԿՍ Յ. ԱՃԵՄԵԱՆ

Դաշտար, Զինիլի Բըլիրը խան, Յրդ յարկ

ԾԱՆՈԹ. — Նամակով բացատրութիւն պահանջողները պէտք է  
ներփակ ուղարկեն 1 դրւ. ի նամակադրօշմ:

ԳԻՒՐԾ.ՄԱ.8251. ՊԱ.8ՄԱ.7ՆԵՐ


فَطُورَلْفَعَلْمَنْجَرْ(م) صَفَا

بِكَارِعَنْدَهْ دَكْسِرَدَهْ بُونْخَارَزَصَالَنْدَنْزَرَوْ ۲۸.

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ ՍԵՒԱ

Բերա, Շիտակ վուղոց, Օսմ. Պանիի Մ. սիրոյին դեմ Ն. 280  
ԳՈՒՆՍԻՈՐ ՆԿԱՐՆԵՐ, ԱԿՐԱՆՏԱՄՄԱՆՆԵՐ, ԳԱՊԻՆԵ-  
ՆԵՐ, ԳԱՐԹ ՓՈՍԹԱԼԵՐ, ԽԵՒՆԵՎԵԼՆ.

ԽԻԱՏ ՄԱՔՈՒՐ ԵՒ ԱԺԱՆ ԳԻՆԵՐՈՎ



254





2013

